

# Զ Ե Կ ՈՒ Յ Ց

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2008 Թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բաց Հասարակության Ինստիտուտի
Աջակցություն հիմնադրամի
Հայաստանի գրասենյակ

Հելսինկյան Քաղաքացիական
Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԶՈՐԱԿՈՉԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ» ծրագիրն իրականացվել է Բաց Հասարակության Ինստիտուտի Աջակցություն հիմնադրամի Հայաստանի գրասենյակի ֆինանսական աջակցությամբ

**Վանաձոր 2009**

Խմբագիր՝ **Արթուր Սաքունց**

Խմբագրակազմ՝ **Արմինե Սադիկյան**
**Անժելա Հարությունյան**

Անգլերեն տեքստի թարգմանությունը՝ **Արմինե Սադիկյանի**

Լուսանկարները՝ **Անժելա Հարությունյանի**

Համակարգչային ձևավորումը՝ **Արմեն Օսիպովի**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** ........................................................................................................ 4

**ԳԼՈՒԽ 1**

**Զորակոչիկների և նրանց ընտանիքների անդամների հետ անցկացված հարցազրույցների արդյունքները** .................................................................... 5

**ԳԼՈՒԽ 2**

**2008 թ-ի գարնանային և աշնանային զորակոչերի ընթացքում զորակոչիկներին և նրանց հարազատներին տրամադրված իրավական խորհրդատվության արդյունքների նկարագրությունը** ...................... 9

**ԳԼՈՒԽ 3**

**Հասարակական կազմակերպություն - ՀՀ Պաշտպանության Նախարարություն**

**Համագործակցությունը զորակոչի ընթացքում** ............................................. 13

**ԳԼՈՒԽ 4**

**Զինվորական ծառայությունից խուսափելու հիմքով հարուցված քրեական գործերի վիճակագրությունը** ........................................................................ 17

**ԳԼՈՒԽ 5**

**Զինապարտության փոխհարաբերությունները կարգավորող օրենսդրության վերլուծությունը** ........................................................................................ 18

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ** ............................................................................. 19

**ԳԼՈՒԽ 6**

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** .............................................................................21

**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ** ........................................................................................ 22

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2008 Թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Քաղաքացիական վերահսկողության ծևավորումը զորակոչի գործընթացի նկատմամբ» ծրագիրը Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվել է 2008 թ-ին՝ Բաց Հասարակության Ինստիտուտի Աջակցության հիմնադրամի Հայաստանի գրասենյակի կողմից տրամադրած ֆինանսական միջոցներով:

Ծրագրի նպատակն էր.

- մշակել և ներդնել զորակոչի գործընթացի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմները
- բացահայտել զորակոչի ընթացքում քաղաքացիների իրավունքների խախտումները և գործողություններ իրականացնել դրանց վերացման ուղղությամբ
- բարձրացնել քաղաքացիների իրազեկման մակարդակը զորակոչիկի իրավունքների վերաբերյալ:

Ներկայացվող զեկույցում ամփոփված են ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունները և ստացված արդյունքները:

Նման համալիր գործողություններ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվել էր առաջին անգամ:

Պետք է հաշվի առնել, որ զինված ուժերի և պաշտպանության գերատեսչության կառույցների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրականացումն ի սկզբանե հանդիպեց մի շարք դժվարությունների, որոնք պայմանավորված էին մի շարք հանգամանքներով: Դրանք են.

- քաղաքացիական հասարակության առջև զինված ուժերի հաշվետվության ավանդույթի բացակայություն,
- ղարաբաղյան կոնֆլիկտի չլուծվածության պայմաններում, հասարակության կողմից զինված ուժերի ընկալումը՝ որպես անվտանգության միակ երաշխիք և որպես անձեռնմխելի կառույց:

Հաշվի առնելով նշված սահմանափակումները՝ զորակոչի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն իրականացվել է հետևյալ մեթոդներով.

- զորակոչիկների և նրանց հարազատների (հիմնականում ծնողների) շրջանում հարցազրույցների անցկացում
- հասարակության իրազեկում զորակոչը կարգավորող օրենսդրական նորմերի վերաբերյալ
- զորակոչիկների խախտված իրավունքների վերականգնմանն ուղղված հարցումների, դիմումների, հայտարարությունների կազմում և հասցեագրում համապատասխան պետական կառույցներին
- զորակոչի վերաբերյալ վիճակագրական տվյալների ծեռքբերում և գնահատում:

Նշված համալիր գործողությունները հանդիսանում են զորակոչի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրականացման, զորակոչիկների իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմ, որը կարող է օգտակար լինել շահագրգիռ այլ կազմակերպությունների համար:
Զեկույցում ներկայացված են նաև օգտագործված գործիքները:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2008 Թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

# ԳԼՈՒԽ 1

## Զորակոչիկների և նրանց ընտանիքի անդամների հետ անցկացված հարցազրույցների արդյունքները

Լոռու մարզում 2008թ. գարնանային և աշնանային զորակոչերի ընթացքում հարցազրույցներ են անցկացվել 315 զորակոչիկների և նրանց ընտանիքի անդամների հետ:

Հարցազրույցների նպատակն էր.

- պարզել զորակոչիկների և նրանց հարազատների իրազեկվածությունն իրենց իրավունքների վերաբերյալ
- բացահայտել զորակոչի ընթացքում զորակոչիկների իրավունքների խախտման փաստերը:

Հարցազրույցներն անց են կացվել Լոռու մարզի Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան Ալավերդի և Տաշիր քաղաքների տարածքային զինկոմիսարիատների կողմից զորակոչի ենթարկված քաղաքացիների հետ:
Դրանք իրականացվել են նախապես մշակված հարցաշարի միջոցով, որը գարնանային զորակոչի ընթացքում կիրառվելուց հետո ենթարկվել է որոշակի փոփոխությունների (տե՛ս կից հավելված 1):
Հարցազրույցների անցկացումը ներառել է զորակոչի կազմակերպման բոլոր փուլերը՝ կցագրում, ծանուցում, բուժզննություն:



*Հարցազրույց զորակոչիկի հետ*

Պետք է նշել, որ հարցազրույցների անցկացման ընթացքում եղան որոշ դժվարություններ: Մասնավորապես՝ զորակոչիկները և նրանց հարազատները դժվարությամբ էին համաձայնվում պատասխանել հարցերին, չնայած այն հանգամանքին, որ ապահովված էր անձի գաղտնիությունը:

Հարցազրույցների արդյունքներից հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

**Ներդիր 1**

**Ինչպե՞ս եք տեղեկացվել զինկոմիսարիատ ներկայանալու մասին**

- Ընկերներս գնացել էին զինկոմիսարիատ, իրենց ասել էին, որ ինձ կտեղեկացնեն:
- Զանգել են մեր ռազմագիտության ուսուցչին, ինքն էլ եկել է մեր տուն, ասել:
- Ավտոբուսում տեսել են և տվել ծանուցագիր:
- Հարևանուհիս, ով աշխատում է պոլիկլինիկայում, տեղեկացրել է, որ պետք է ներկայանամ զինկոմիսարիատ

- զորակոչի կազմակերպման բոլոր փուլերում (կցագրում, ծանուցում, բուժզննում) ցածր է զորակոչիկների իրազեկվածությունն իրենց իրավունքների եվ պարտականությունների մասին
- զորակոչի կազմակերպման առաջին փուլի՝ կցագրման աշխատանքների իրականացումն ընդհանրապես չի ներառում ապագա զորակոչիկների իրազեկումն իրենց իրավունքների և պարտականությունների մասին
- զինկոմիսարիատների կողմից պատշաճ մակարդակով չի իրականացվում զորակոչիկների ծանուցումը՝ զինկոմիսարիատ ներկայանալու համար: Ճիշտ է, ծանուցագրերի

58%-ը զորակոչիկին տրամադրվում է զինկոմիսարիատի աշխատակցի կողմից, սակայն կիրառվում է նաև հեռախոսով կամ այլ կողմնակի անձանց միջոցով զինկոմիսարիատ ներկայանալու տեղեկացման ձևը

- զորակոչիկների մեծ մասը ծանոթ չէ ծանուցագրի բովանդակությանը
- մեծ թիվ է կազմում զինկոմիսարիատի կողմից պահանջվող փաստաթղթերի թիվը, որը հասնում է մինչև 15-ի
- զինկոմիսարիատներում զորակոչիկներին պատշաճ մակարդակով չեն ծանոթացնում իրենց իրավունքներին ու պարտականություններին:

**Ներդիր 2**

**Զինկոմիսարիատում, որպես զորակոչիկ, բացատրե՞լ են Ձեր իրավունքներն ու պարտականությունները**

- Զինկոմիսարիատի աշխատակիցն ասաց, որ պետք է լսեմ և կատարեմ բոլոր հրամաններն ու իրավունք ունեմ տուն գալ, եթե ինձ լավ պահեմ և այլն:
- Զինկոմիսարիատի աշխատակիցը բացատրել է, որ պարտավոր եմ երկու տարի ծառայել և ենթարկվել ՀՀ օրենքներին:
- Այո, զինկոմիսարիատի համապատասխան աշխատակցի կողմից, որը կետ առ կետ բացատրել է որպես զորակոչիկ իմ իրավունքներն և պարտականությունները:
- Այո, բացատրել են` ասելով, որ փախչելու դեպքում օրենքով կդատապարտվեմ:

**Ներդիր 3**

**Ինչպիսի՞ն է եղել Ձեր նկատմամբ վերաբերմունքը զինկոմիսարիատում**

- Արհամարհական, ասես մենք լինեինք նրանց ստրուկը
- Նորմալ, քանի որ ինքնակամ եմ եկել

- զորակոչիկների գերակշիռ մասը հնարավորություն չունի ծանոթանալու զորակոչի վերաբերյալ տեղեկություններին և փաստաթղթերին
- զորակոչիկների մի մասը ընդհանրապես չի հիշում, թե ինչ է ներառել բուժզննությունը, նրանց համար հստակ չէ բուժզննության հանձնաժողովի կազմը
- որպես կանոն, զորակոչիկներին չեն տրամադրվում բժշկական զննության եզրակացությունները

**Ներդիր 4**

**Եթե անցել եք հանրապետական բուժզննում, ապա ի՞նչ տևողությամբ, ի՞նչ ֆինանսական ծախսեր են կատարվել և ինչի՞ համար**

- Բուժզննումը երկու օր է տևացել: Որպես ճանապարհածախս տալիս են միայն Վանաձորից Երևան ավտոբուսի գումար, իսկ սնունդը և գիշերելը մնում է քո վրա:
- Երկու օր է տևացել, բուժզննումն անցել է անվճար, անալիզները հանձնելիս բժիշկն ասել է` «Բա 200 /երկու հարյուր/ դրամ չե՞ս տալիս», սակայն զորակոչիկը չի տվել: Ծախսեր է արել քաղաքում մնալու համար:
- Բուժզննությունը տևացել է չորս օր, որից երկու օրը մնացել եմ «Արմենիա» հիվանդանոցում, մյուս երկու օրը` այլ տեղ, հիվանդանոցում չէի կարող մնալ, որովհետև բուժզննության շարունակությունն ակնաբուժական կենտրոնում էր: «Հիվանդանոցում էլ չորս պատերն էին, մի քանի հատ մահճակալ, դրանց վրա պատառոտված ծածկոցներ, ցուրտ էր, ջեռուցում չկար: Կռիվ արեցինք, պահեստից երկու հատ ադեալ /ծածկոց/ տվեցին, այդպես եմ քնել, առանց կոշիկներս հանելու:
- Երկու օր մնացի, հետո էլ չէին թողնում, մյուս երկու օրն էլ ուրիշ տեղ եմ մնացել: Իսկ երբ ուզում էի 4-րդ օրը շուտ տուն գամ, ասեցի, որ մնալու տեղ չունեմ, պետք է շուտ գնամ, պատասխանեցին, որ պետք է մնամ ու տեսնեմ գլխավոր բժշկին, հակառակ դեպքում ամբողջ բուժզննումը պետք է նորից անցնեմ: Ստիպված մնացել եմ մինչև կեսօր ու վերադարձել կեսօրից հետո:

- հանրապետական բուժզննության իրականացման համար պետության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությունն անբավարար է իրական ծախսերի համեմատ[1]

---

[1] *2008 թ-ի գարնանային զորակոչի ժամանակ զորակոչիկները պետության կողմից, որպես ֆինանսական աջակցության չափ, նշում էին 1200 դրամ: Գարնանային զորակոչի վերաբերյալ կազմակերպության զեկույցը ՀՀ Պաշտպանության նախարարություն ներկայացնելուց հետո ՀՀ Պաշտպանության նախարարի հանձնարարությամբ 2008թ-ի աշնանային զորակոչի ժամանակ տրամադրվող ֆինանսական աջակցության չափը ավելացվեց մինչև 3000 դրամ, սակայն աշնանային զորակոչի ընթացքում զորակոչիկների հետ հարցազրույցները ցույց տվեցին, որ ՀՀ Պաշտպանության նախարարի հանձնարարությունը հիմնականում չի կատարվում:*

**Ներդիր 5**

**Եթե անցել եք հանրապետական բուժզննում, ապա ո՞վ է հոգացել ձեր ճանապարհածախսը**

- Ասել էին կգնաս կվերցնես ճանապարհածախսը, բայց չգնացի, այնքան են տալիս, որ ոչ մի բանի չի հերիքում, ի՞նչ վերցնեի:
- Զինկոմիսարիատից մեկ անգամ տվել են 3000 (երեք հազար) դրամ, ասել են, որ եթե հիվանդանոցում մնամ, ամեն օրվա համար կտան 700 (յոթ հարյուր) դրամ, բայց ես գիտեմ, որ սուտ է, չեն տալիս, երկու օր մնացի, չտվեցին:

- հանրապետական բուժզննության անցկացումը որոշ զորակոչների կողմից գնահատվում է որպես ծախսատար և ժամանակատար

- հանրապետական բուժզննության հանձնաժողովը ոչ բոլոր դեպքերում է հաշվի առնում զորակոչիկների բողոքներն իրենց առողջական վիճակի վերաբերյալ

- դժգոհություններ կան բուժզննության ընթացքում զորակոչիկների նկատմամբ դրսևորված անհարգալից վերաբերմունքի մասին

**Ներդիր 6**

**Ինչպիսի՞ն է եղել վերաբերմունքը Ձեր նկատմամբ բժշկական զննության ընթացքում**

- Մանրակրկիտ ուսումնասիրել են, եղել են հոգատար և ուշադիր:
- Նույնիսկ անալիզի համար 200 դրամը չտալուց առաջ և հետո վերաբերմունքը չի փոխվել:
- Ինձ զննող բժշկի վերաբերմունքը լավ է եղել, իսկ անալիզները վերցնող բժիշկները շատ կոպիտ են եղել: էդ մարդկանց էլ կարելի է հասկանալ, օրվա մեջ մոտ 200 զորակոչիկ են ընդունում, մեկը ոտքով է դուռը փակում, մյուսն այլ բան է անում:
- Ստուգել են մանրակրկիտ, բացի ստուգումը հարցրել են ինձ, թե ես ինչ բողոքներ ունեմ:
- Նորմալ, հերթականությամբ բոլոր զորակոչիկներին հրավիրել են ներս, ստուգել են մանրակրկիտ ձևով և բարեկիրթ ճանապարհել:
- Նայած, որ սենյակում, մեկում՝ լավ, մյուսում՝ վատ:
- Բժիշկը շատ բարեհամբույր էր, բայց շատ եմ սպասել, մոտավորապես 4-5 ժամ:
- Շատ վատ, խոժոռված հայացքներով, կոպիտ են վերաբերվել: Ինձ որպես զորակոչիկի սպասեցրել են մի քանի ժամ, ուրիշ հաճախորդների են ընդունել (փողով):

- ցածր է զորակոչիկների իրազեկման մակարդակը տարկետման հիմքերի վերաբերյալ

- չնայած զորակոչի ընթացքի վերաբերյալ բողոքների առկայությանը, զորակոչիկները, որպես կանոն, խուսափում են դրանք ներկայացնել որևէ պետական մարմնի

**Ներդիր 7**

**Ունեցե՞լ եք արդյոք դժգոհություններ կամ բողոքներ զորակոչի ընթացքում**

- Այո, լսում և տեսնում ենք հեռուստացույցով, որ բանակին առողջ զինվոր է պետք, բայց հաշվի չեն առնում առողջական վիճակը: Ես չեմ հասկանում, թե այսպիսի հիվանդության դեպքում, (թեթև արտահայտված գանգուղեղի տրավմայից) ինչպե՞ս կարող են բանակ զորակոչել, վաղը մյուս օրը կարող եմ պրոբլեմներ ունենալ և հաստատ կունենամ, միշտ այդպես է եղել, ինչո՞վ են պատասխան տալու և ի՞նչ եմ անելու ես:
- Բողոքներ չունեմ, բայց կառաջարկեմ, որ զինկոմիսարիատ կանչելիս ոչ թե մի օր նշանակեն ու ժամը 9-ին կանչեն ու հետն էլ պարտադրեն, այլ գոնե մի քանի օր՝ ասենք 5 օր ժամանակ տան ու ասեն՝ ներկայացեք այդ օրերի ընթացքում:
- Ժամանակից շուտ են հրամաններ տալիս:
- Ինչու՞ պետք է ԼՂՀ-ի քաղաքացին չգա Հայաստան ծառայի, իսկ ՀՀ քաղաքացին գնա Ղարաբաղ:
- Միայն տեսողությունից եմ բողոքել, սակայն աչքի բժիշկը ուղեգիր չի տվել, որպեսզի հանրապետականում աչքի զննություն անցնեմ:
- Որովհետև չեն տեղեկացնում իմ իրավունքների մասին:
- Զինկոմիսարիատում մի օր 4 ժամ սպասել ենք, որ թղթերը կարգավորեն:
- Շատ են այստեղ-այնտեղ ուղարկում, հիմնականում բժիշկները:
- Քաշքշուկի համար ենք բողոքում:

**Ներդիր 8**

**Ներկայացրե՞լ եք այդ բողոքները որևէ մարմնի և ի՞նչ ընթացք են դրանք ստացել**

- Այդ մասին տեղեկացրել եմ նաև հանձնաժողովին և ոչ մի արձագանք: Դա իրենց չի հետաքրքրում, բա շատ պետք ա՞:
- Բողոք երբևէ չեմ ներկայացրել, իսկ այն, որ կուզեի փոխել, դա բուժզննման ընթացքն ավելի համակարգված դարձնելն է, որ հիվանդանոցում նման մեծ հերթեր չառաջանան: Մարդիկ կային, որ 2 շաբաթ էր սպասում էին, նայում ես մեկին թևն ընկած են բերում, ի վիճակի չի սպասել, ո՞նց հերթդ իրեն չտաս... ու պրոբլեմներ է առաջանում: Բուժզննման գնալիս գոնե հոգ տանեն գնալ - գալու մասին: Գոնե զորակոչիկին հասանելիք 700 դրամները չուտեն, տան: Իսկ այն հարցին, թե ի՞նչ է կարծում արդյո՞ք այդ 700 դրամները հիվանդանոց են մտնում և զորակոչիկին չեն հասնում, պատասխանեց. «Կարծում եմ`դա գնում է իրենց գրպանը: Կան զորակոչիկներ, որ աղմուկ են բարձրացնում, կռիվ սարքում դրա համար, գումարը հանում, տալիս են: Որ ձայն չենք հանում, չեն տալիս»:
- Բողոքներ եմ ներկայացրել Վանաձորի զինկոմիսարիատին: Եթե հարցը չլուծվի, բողոքելու եմ նաև նախարարին:

- հանրապետական բուժզննություն անցնելու համար անհրաժեշտ տրանսպորտի և սննդի համար ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով որոշ զորակոչիկներ ընդհանրապես հրաժարվում են հանրապետական բուժզննություն անցնել:

# ԳԼՈՒԽ 2

## 2008 թ-ի գարնանային և աշնանային զորակոչերի ընթացքում զորակոչիկներին և նրանց հարազատներին տրամադրված իրավական խորհրդատվության արդյունքների նկարագրությունը

2008 թ-ի գարնանային և աշնանային զորակոչերի ընթացքում իրավական խորհրդատվություն ստանալու նպատակով կազմակերպություն է դիմել 14 քաղաքացի:



*Իրավական խորհրդատվության տրամադրում*

Խորհրդատվության արդյունքները ներկայացված են հավելված 2-ում:

Պետք է նկատել, որ աշնանային զորակոչի ընթացքում կազմակերպություն դիմած քաղաքացիների մի մասը խուսափում էր նշել իր անունն ու ազգանունը: Կարևորելով հասարակության իրազեկման մակարդակի բարձրացումը զորակոչը կարգավորող օրենսդրական նորմերի վերաբերյալ՝ մարզի տեղական հեռուստաընկերություններով կազմակերպվել են ուղիղ հեռուստաեթերներ:
Մեկ ժամանոց 6 հեռուստաեթերների ընթացքում ուղիղ հեռախոսակապի միջոցով իրավական բնույթի հարցերով դիմել են 45 քաղաքացիներ: Քաղաքացիների հարցերը վերաբերվել են տարկետման տրամադրման հիմքերին (հատկապես առողջական պատճառներով), այլընտրանքային ծառայություն անցնելու կարգին, երկքաղաքացիության ինստիտուտի հետ կապված զինապարտության խնդրին և այլն:

***Ուղիղ հեռախոսակապով անանուն դիմած քաղաքացիների և անմիջականորեն կազմակերպություն ներկայացած քաղաքացիների թվի զգալի տարբերությունը, ինչպես նաև հարցազրույցների անցկացման ընթացքում զորակոչիկների զգալի մասի խուսափումը հարցազրույցներից հիմք են տալիս պնդելու, որ քաղաքացիները խուսափում են անձնավորված կերպով իրենց կարծիքները, դժգոհությունները ու բողոքները հրապարակային ներկայացնելուց:***



Հեռուստաեթեր

Կազմակերպություն դիմած քաղաքացիների խնդիրները հիմնականում պայմանավորված էին բուժզննության անցկացման անբավարար թափանցիկությամբ:
Նշենք, որ զորակոչիկների բժշկական զննությունն անց է կացվում ՀՀ Պաշտպանության նախարարի 2006 թ-ի մարտի 30-ի թիվ 378 հրամանով հաստատված «Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգի» համաձայն: Նշված հրամանով սահմանվում է հիվանդությունների ցանկը (կարգի հավելված 1-ով և հավելված 2-ով), որոնց հիման վրա Հանրապետական զորակոչային հանձնաժողովը տրամադրում է տարկետում կամ ազատում է պարտադիր զինվորական ծառայությունից: Նման կարևոր փաստաթուղթը (կարգի հավելված 1-ը և հավելված 2-ը) նախատեսված են ծառայողական օգտագործման համար: Փաստորեն, զորակոչիկը կամ զինապարտը հնարավորություն չունեն ծանոթանալու այն իրավական փաստաթղթերին, որոնցով սահմանվում է տարկետման համար հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը: Այսինքն՝ զորակոչիկը հնարավորություն չունի նաև բողոքարկելու Հանրապետական զորակոչային հանձնաժողովի որոշումը՝ դրա հետ համաձայն չլինելու դեպքում:
Մասնագետների հետ ունեցած զրույցներից պարզվեց, որ հիվանդությունների ցանկն ըստ տարիների փոփոխվում են, այսինքն՝ հիվանդությունները, որոնց հիման վրա տարկետում էր տրամադրվում 3-4 տարի առաջ, 2008 թ-ին դրանց առկայության դեպքում զորակոչիկը ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար:

***Մի կողմից տարկետման համար հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը սահմանող իրավական ակտի անմատչելիությունը, մյուս կողմից հիվանդությունների ցանկի պարբերաբար փոփոխումը մեծացնում են զորակոչը կարգավորող իրավական նորմերի անկանխատեսելիությունը և զորակոչի նկատմամբ քաղաքացիների անվստահությունը:***

Չլուծված խնդիր է հանդիսանում զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ բուժզննության հանձնաժողովի եզրակացության ձեռքբերումը:
Կազմակերպության կողմից առանձին զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ ահազանգերը հիմնականում հաշվի են առնվել ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից
(տե՛ս հավելված 2): Նշանակվել են կրկնակի բուժզննումներ, բայց դրանց հիման վրա կայացված որոշումները, ըստ էության, մնացել են նույնը:

***Մտահոգիչ է այն հանգամանքը, որ էական տարբերություններ կան քաղաքացիական բժշկական հաստատություններում բժիշկ-մասնագետների կողմից մինչ զորակոչվելը զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության և ռազմաբժշկական փորձաքննության հանձնաժողովի եզրակացության միջև:***

Քաղաքացու առողջության վերաբերյալ երկու մասնագիտական եզրակացությունների միջև էական տարբերությունը հասկանալի չէ և որևէ կերպ չի մեկնաբանվում:
2008 թ-ի աշնանային զորակոչի ընթացքում առավել երկարատև իրավական խորհրդատվություն տրամադրվեց Վանաձոր քաղաքի Տարոն 2 թաղամասի բնակիչ Արմեն Ներսիսյանին, որը մինչ զո-



*Զորակոչիկների բուժզննություն*

րակոչվելը քաղաքացիական բժիշկ-մասնագետի կողմից ստացել է «Դիսկոգեն ռադիկալապատիա, մշտական ցավային սինդրոմով» ախտորոշումը:

Մեր կազմակերպության կողմից ահազանգերի և դիմումների հիման վրա ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից նշանակվել է երկու բուժզննություն, որոնց արդյունքում, այնուամենայնիվ, Արմեն Ներսիսյանը ճանաչվել է պիտանի շարային ծառայության համար:

**Ներդիր 9**

**Զորակոչիկ Արմեն Ներսիսյանի բուժզննության նկարագրությունը**

Հանրապետական բուժզննման ժամանակ մի քանի օր Երևանում մնալուց հետո Ա. Ներսիսյանը ցանկացել է իրերը հավաքել և վերադառնալ Վանաձոր: Հանրապետական հիվանդանոցի աշխատակազմի անդամներից մեկը մոտեցել և հարցրել է, թե ի՞նչ է պատահել: Զորակոչիկը հայտնել է, որ ինքը գիտի, որ հանրապետական հիվանդանոցում մնացած յուրաքանչյուր օրվա համար 700 /յոթ հարյուր/ դրամ են վճարում: Նա հարցրել է, թե, որտեղից գիտի, զորակոչիկը պատասխանել է, որ իր ծանոթն է ասել: Զորակոչիկին տրամադրել են երեք օրվա մնալու գումարը՝ չորս օրվա փոխարեն: Ա. Ներսիսյանը օրերով սպասել է թղթերին, երբ գնացել է դրանց հետևից, նյարդաբանական բաժնի աշխատակիցը պատճառաբանել է, որ թղթերը դեռ ստորագրված չեն, սակայն, ըստ զորակոչիկի, աշխատակիցը պարզապես ձգձգել է այդ փաստաթղթերի տրամադրումը: Վերջինս Ա. Ներսիսյանին ասել է, որ գոնե 500 /հինգ հարյուր/ դրամ տա, որ իր գործը համակարգիչ գցեն: Ա. Ներսիսյանը պատասխանել է, որ պետք չէ իր գործը համակարգիչ գցեն: Ա. Ներսիսյանը ժամը 09:00 - 15:30-ը սպասել է և առանց գումար տալու վերցրել է թղթերն ու տուն եկել:

Զորակոչվելուց հետո նրա մոտ առաջ եկան առողջության հետ կապված լուրջ խնդիրներ:

Ստեղծված իրավիճակում մեր կազմակերպության կողմից 2009 թ. հունվարի 8-ին բաց նամակ ուղարկվեց ՀՀ Պաշտպանության նախարարին՝ Արմեն Ներսիսյանի նկատմամբ լրացուցիչ բուժզննություն անցկացնելու հարցով (տե՛ս հավելված 3):

Հետաքրքիր է նշել, որ մինչ այդ, Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարը 2008 թ. դեկտեմբերի 27-ի գրությամբ հայտնում է մեր կազմակերպությանը, որ Արմեն Ներսիսյանն անցել է կրկնակի բուժզննում, ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար և,

Վերջին բուժզննության ժամանակ բժիշկներն իրար մեջ խորհրդակցել են. նրանցից մեկն առաջարկել է. «Գրենք, թող հանրապետականում պառկի», հետո ասել են.«Բուժում նշանակենք, վեց ամիս հետաձգենք, թող Վանաձորում պառկի»: Սակայն չի ընդունվել այդ առաջարկը` այն պատճառաբանությամբ, որ վեց ամիսը երկար ժամանակ է, և ուշ կլինի: Բժիշկներից մեկն էլ ասել է. «Գեներալնի գրենք, թող իրեն նվեր լինի», հետո ավելացրել է. «Արագացրեք, տեսնենք, թե էն մի ախպորն ինչ ենք անում»: Արդյունքում տվել են «գեներալնու» թուղթը:

Հերթական բուժզննմանը Ա. Ներսիսյանը ներկայացել է մոր հետ: Ըստ զորակոչիկի և նրա ծնողի հավաստման` այնտեղ հագուստը հագին իբր ստուգել են զորակոչիկին: Նյարդաբանը մատով սեղմել է Ա.Ներսիսյանի մեջքին, սակայն նա ոչինչ չի զգացել, քանի որ հագուստով է եղել: Այնուհետև փոքրիկ մուրճով հարվածել է զորակոչիկի ոտքերին, որից հետո նրան ասել են, որ գնա դռան մոտ սպասի: Ա. Ներսիսյանը նյարդաբանին հայտնել է, որ գլուխն ու վիզն էլ է ցավում: Նյարդաբանը հարցրել է, թե ինչից է գլխացավը, զորակոչիկը պատասխանել է, որ չգիտի: Նյարդաբանը ստուգել է զորակոչիկի գլուխը և ասել, որ դռան մոտ սպասի, և կանչել է քիթ - կոկորդի մասնագետին: Վերջինս եկել, ստուգել է և դարձյալ ոչինչ չի ասել, ինչ-որ բան է գրել, որի մասին զորակոչիկը տեղյակ չէ: Ինչքան խնդրել է քիթ-կոկորդի հետազոտման պատասխանը, Ա. Ներսիսյանին այն չեն տրամադրել, հետո ստուգել են նրա ատամներն ու ասել, որ սպասի: 20-30 րոպե սպասելուց հետո թղթերը բերել են: Ա. Ներսիսյանը գնացել է գեներալի մոտ, որը, նայելով թղթերին, ասել է. «Հանգիստ և թեթև ծառայություն»:

որ հանձնաժողովի որոշումը վերջնական է (տե՛ս հավելված 4):

Հակառակ սրան, ՀՀ Պաշտպանության նախարարությունը 2009 թ-ի հունվարի 19-ի գրությամբ հայտնում է, որ «Ներսիսյանը ստացիոնար հետազոտում և բուժում է անցել կայազորային և կենտրոնական զինվորական հոսպիտալներում և ճանաչվել է պիտանի ոչ շարային ծառայության համար» (տե՛ս հավելված 5):

Այսինքն` զորակոչից առաջ և զորակոչվելուց հետո, նույն մարդու առողջության վերաբերյալ մեկ ամսվա ընթացքում ստացվում են 2 տարբեր եզրակացություններ: Սա այն եզակի դեպքերից է, երբ ակնհայտորեն երևում է բուժզննության կարգի անկանխատեսելիությունը:

Ոչ պաշտոնական քննարկումների ժամանակ պաշտպանական գերատեսչության ներկայացուցիչները պնդում են, որ լուրջ խնդիր է զինված ուժերի համալրումը: Հարցին, թե արդյոք դա պետք է կատարվի նաև առողջական խնդիրներ ունեցող քաղաքացիների ներգրավմամբ` կամ տրամաբանական պատասխան չենք ստանում կամ տրվում է միանշանակ դրական պատասխան:

# ԳԼՈՒԽ 3

## Հասարակական կազմակերպություն - ՀՀ Պաշտպանության Նախարարություն Համագործակցությունը զորակոչի ընթացքում

Մինչ Լոռու մարզում զորակոչի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրականացումը, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից գրություն ուղարկվեց Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարին իրականացվող ծրագրի և նախատեսվող գործողությունների մասին:
Գրությամբ միաժամանակ դիմեցինք Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարին` ակնկալելով աջակցություն զորակոչի ընթացքում Լոռու մարզի տարածքային զինվորական կոմիսարիատների կողմից հնարավոր խոչընդոտների բացառման համար:
ՀՀ Պաշտպանության նախարարը շրջաբերական նամակով հանձնարարեց Լոռու մարզի զինվորական կոմիսարիատներին օրենքի շրջանակներում աջակցել ՀՔԱ Վանաձորի գրասենյակին զորակոչի մոնիթորինգի իրականացման գործում:
Ընդհանուր հաշվով 2008 թ-ի գարնանային և աշնանային զորակոչերի հետ կապված հարցերով ՀՀ Պաշտպանության նախարարին, ՀՀ Զինվորական կոմիսարին, տարածքային զինվորական կոմիսարներին ուղարկվել է 39 գրություն (տե՛ս հավելված 6):

2008 թ-ի գարնանային զորակոչի մոնիթորինգի արդյունքների հիման վրա կազմված զեկույցը ուղարկվել է ՀՀ Պաշտպանության նախարարին, ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին և ՀՀ Անվտանգության Խորհրդի քարտուղարին: ՀՀ Պաշտպանության Նախարարությունից մենք ակնկալում էինք զեկույցում նշված խնդիրների և առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանություններ և դիտողություններ:

2008 թ-ի հոկտեմբերի 16-ին ՀՀ զինվորական կոմիսար Քոչունցը իր պատասխան նամակում հայտնում է, որ 2008 թ. գարնանային զորակոչի մոնիթորինգի արդյունքները ուսումնասիրվել և քննարկվել են ՀՀ զինվորական կոմիսարիատում: Միաժամանակ հայտնում է, որ «փաստերը հիմնականում չեն համապատասխանում իրականությանը, իսկ որոշ փաստեր, որոնք համապատասխանում են իրականությանը, վերցված է ի գիտություն` առաջիկայում և հետագա զորակոչերի ժամանակ բացառելու նպատակով» (տե՛ս հավելված 7):

Այսինքն` որևէ կոնկրետ մեկնաբանություն կամ առաջարկություն զեկույցում նշված խնդիրների վերաբերյալ չի ներկայացվել ՀՀ զինկոմիսարիատի կողմից:

Կարևորելով Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության մեկնաբանությունների և առաջարկությունների կոնկրետ բովանդակությունը` վերստին 2008 թ-ի հոկտեմբերի 23-ին դիմեցինք ՀՀ Պաշտպանության նախարարին:
2008 թ-ի նոյեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարի ավագ օգնական, վարչական ապարատի ղեկավար Է. Գևորգյանի ստորագրությամբ ստացվեց պատասխան, որում նշվում է.

- Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարի հանձնարարականով «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի դրույթները հրապարակային դարձնելու նպատակով տարածքային զինվորական կոմիսարիատները հրահանգավորվել են զինվորական կոմիսարիատների շենքերի տեսանելի հատվածում ցուցադրական վահանակներ փակցնել

- Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարը հանձնարարել է «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի համաձայն զորակոչիկների իրավունքների և պարտականությունների մասին տեսական լրատվամիջոցներով պարզաբանումներ տալ զորակոչի նախօրեին և ընթացքում
- Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարի հանձնարարականով փոփոխության է ենթարկվել ՀՀ ՊՆ 378-2006 թ. ռազմաբժշկական փորձաքննության կարգի վերաբերյալ հրամանը՝ բուժզննման աշխատանքները ավելի հստակեցնելու նպատակով:

Ինչպես հայտնվում է գրության մեջ, «պետության կողմից երբևիցե նախադեպը չունեցող ֆինանսական միջոցներ են տրամադրվել բուժվերազննման աշխատանքներին, որոնց մեջ է մտնում նաև զորակոչիկներին բժշկական հետազոտության ուղարկելու ճանապարհածախսը» (տե՛ս հավելված 8):

2008 թ. աշնանային զորակոչի ընթացքում զորակոչիկների հետ հարցազրույցները վկայում են, որ ճանապարհածախսի համար հատկացվող գումարների չափը առավելագույնը ավելացել է մինչև 3000 (երեք հազար) դրամ, բայց դրանք տրամադրվում են փոքր թվով զորակոչիկների (տե՛ս գլուխ 1):

ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից վերը նշված գրության մեջ չի նշվում ճանապարհածախսի փոխհատուցման գումարի չափը, և այդ պատճառով հնարավոր չէ ճշտել, թե ինչքան է իրականում դա էական ազդեցություն ունեցել հատկապես հանրապետական բուժզննության անցնելու համար զորակոչիկների ճանապարհածախսի վրա, բայց պարզ է, որ նույնիսկ 3000 դրամը բավարար չի կարող լինել, ասենք, Գորիսից կամ Նոյեմբերյանից Երևան տեղափոխվելու համար:

Մեր կողմից Լոռու մարզի զինվորական կոմիսարիատների շենքեր այցելությունից պարզվեց, որ Վանաձորի և Տաշիրի զինվորական կոմիսարիատները հրահանգներ չեն ստացել զորակոչիկների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ցուցադրական վահանակներ փակցնելու մասին: Թումանյանի և Սպիտակի տարածաշրջանների զինկոմիսարիատներում հայտնել են, որ հրահանգներ եղել են: Ցուցադրական վահանակը փակցված է միայն Թումանյանի զինվորական կոմիսարիատում:

2008 թ-ի գարնանային զորակոչի մոնիթորինգի արդյունքների հիման վրա, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակում տեղի ունեցավ աշխատանքային քննարկում, որին մասնակցեցին ՀՀ զինվորական կոմիսարիատի (ՀՀ զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժնի պետ Գ. Հարությունյանը), Տաշիրի, Ստեփանավանի, Թումանյանի, Վանաձորի զինվորական կոմիսարիատների զորակոչային բաժնի պետերը, Սպիտակի զինվորական կոմիսարը և Լոռու մարզպետի խորհրդականը: Քննարկման ընթացքում անդրադարձ եղավ գարնանային զորակոչի մոնիթորինգի ընթացքում բացահայտված խնդիրներին, ինչպես նաև հետագա անելիքներին:
Հանդիպումը ինքնին կարևոր էր հասարակական կազմակերպություն-Պաշտպանության նախարարություն




*Զինկոմիսարիատներում տեղադրված վահանակները*

համագործակցության տեսակետից, որն էական նշանակություն կարող է ունենալ, ինչպես զորակոչի, այնպես էլ զինված ուժերի նկատմամբ հասարակության վստահության ձևավորման համար: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ 2008 թ. գարնանային զորակոչի մոնիթորինգի ընթացքում բացահայտված կոնկրետ խնդիրների վերաբերյալ ՀՀ Պաշտպանության նախարարության արձագանքը ուներ ավելի շատ ընդհանրական բնույթ, մասնավորապես՝ ՀՀ Պաշտպանության նախարարության անձնակազմի հետ տարվող աշխատանքների վարչության կողմից:


*Քննարկում Վանաձորում*

Անձնակազմի հետ տարվող աշխատանքների վարչության պետ, գեներալ-մայոր Վ. Ավետիսյանը պատասխան գրությամբ հայտնում է հետևյալը. «Ձեր նախաձեռնությամբ Լոռու մարզում անցկացված զորակոչի գործընթացի վերաբերյալ մոնիթորինգի վերլուծության մեջ բարձրացված հարցերը վաղուց գտնվում են ՀՀ Պաշտպանության նախարարության ուշադրության կենտրոնում և հաշվի են առնված զինված ուժերի բարեփոխումների ծրագրում» (տե՛ս հավելված 9):

ՀՀ Պաշտպանության նախարարության աշխատակցի հետ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ներկայացուցչի անմիջական զրույցի ընթացքում անդրադարձ եղավ նաև գարնանային զորակոչի ժամանակ առողջության պատճառով տարկետում ստացածների հարցին: Նշվեց, որ, ըստ ուսումնասիրությունների զորակոչիկների մոտավորապես 48%-ը այդ հիմքով է ստացել տարկետում: Նշված խնդիրը ունի երկու կողմ՝ մի կողմից անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել նախազորակոչային տարիքի երիտասարդների, պատանիների առողջության պահպանմանը՝ համարելով դրանք որպես պետական կարևոր նշանակության խնդիր կամ, միևնույն ժամանակ, անհրաժեշտ է լրջորեն ուսումնասիրել տարկետման վերաբերյալ եզրակացությունները՝ հնարավոր կոռուպցիոն ռիսկերի բացառման նպատակով, որի վերաբերյալ հասարակության կողմից կան բազմաթիվ ահազանգեր:

Վերջին խնդիրների վերաբերյալ, իհարկե, անհրաժեշտ է դրսևորել կամք և հետևողականություն՝ նվազեցնելու հնարավոր կոռուպցիոն ռիսկերը: Եվ հարցերը պետք է ոչ միայն իրավական տեսակետից դիտարկել, այլ նաև բուժզննության անցկացման թափանցիկության, կանխատեսելիության ապահովման տեսակետից:

Տեղին է նշել, որ աշնանային զորակոչի վերաբերյալ Լոռու մարզի որևէ զինվորական կոմիսարիատ այդպես էլ չտրամադրեց որևէ թվական տվյալներ հետևյալ տեղեկությունների վերաբերյալ.

1. քանի՞ հոգի է ենթակա եղել պարտադիր զինծառայության
2. քանի՞ հոգու է տրվել ծանուցում զորակոչի մասին
3. քանի՞ հոգի է ստացել տարկետում և ի՞նչ տևողությամբ
4. քանի՞ հոգի է ստացել տարկետում
   ա) առողջական վիճակի պատճառով
   բ) ընտանեկան դրության բերումով
   գ) ուսումը շարունակելու համար
5. քանի՞ հոգի է դիմել «Այլընտրանքային ծառայության» անցնելու համար
6. քանի՞ զորակոչիկի գործ է ուղարկվել դատախազություն զորակոչից խուսափելու համար:

Լոռու մարզի բոլոր զինվորական կոմիսարիատները տեղեկատվություն ստանալու վերաբերյալ մեր հարցմանը տվեցին նույնանման (և՛ բովանդակությամբ, և՛ բառացի) պատասխաններ (տե՛ս հավելված 10): Ինչպես կարելի է տեսնել պատասխաններից՝ տարածքային զինվորական կոմիսարները որևէ իրավական նորմ չեն հիշատակում և առաջարկում են դիմել ՀՀ զինվորական կոմիսարին:

2009 թ-ի փետրվարի 6-ին, կազմակերպության կողմից պատրաստվեց գրություն՝ ուղղված ՀՀ զինվորական կոմիսարին, որով կազմակերպությունը խնդրում է տրամադրել լրացուցիչ տեղեկություններ զեկույցի ամբողջացման համար: ՀՀ զինվորական կոմիսարը 17.02. 2009 թ-ի պատասխան գրությամբ հայտնում է, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակին կտրամադրվի տեղեկություն միայն 5-րդ և 6-րդ կետերի վերաբերյալ: Պատասխան նամակներ են ստացվել Լոռու մարզի բոլոր զինկոմիսարիատների կողմից:

2008 թ-ի գարնանային զորակոչի թվական տվյալների վերաբերյալ այդպես էլ պաշտոնապես որևէ պատասխան չստացանք ՀՀ Պաշտպանության նախարարությունից: Վերջինս տեղեկատվության չտրամադրումը հիմնավորում է դրանց՝ որպես ծառայողական գաղտնիք լինելու հանգամանքով: Կազմակերպությունը տեղեկությունների ստացման հարցը որոշեց լուծել դատական ճանապարհով:
ՀՀ վարչական դատարանի կողմից վարույթ է ընդունվել «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության կողմից հայցադիմումը՝ ՀՀ Պաշտպանության նախարարությանը տեղեկություններ տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին (դատական առաջին նիստը նշանակվել է 2009 թ-ի մայիսի 29-ին):

2008 թ-ի աշնանային զորակոչի զեկույցը ևս ուղարկվել է ՀՀ Պաշտպանության նախարարությանը՝ կրկին ակնկալելով նրանց կողմից մեկնաբանություններ և առաջարկություններ, 2009 թ-ի ապրիլի 8-ին աշնանային զորակոչի զեկույցի վերաբերյալ ստացել ենք պատասխան նամակ Պաշտպանության նախարարությունից այն մասին, որ մեր զեկույցի մեջ նշված բացասական երևույթները վերցվել են ի գիտություն՝ հետագայում զորակոչերի ժամանակ նման դեպքերը բացառելու նպատակով:

# ԳԼՈՒԽ 4

## Զինվորական ծառայությունից խուսափելու հիմքով հարուցված քրեական գործերի վիճակագրությունը

Լոռու մարզում 2008 թ-ի գարնանային և աշնանային զորակոչից խուսափելու համար հարուցված քրեական գործերի վերաբերյալ տեղեկատվությունը ստացվել է Լոռու մարզի դատախազությունից:

ՀՀ Քրեական օրենսգրքի 327 հոդվածի առաջին մասով՝ ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորավարժանքից խուսափելը այդ ծառայությունից ազատվելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: Լոռու մարզի քննչական բաժնի կողմից քրեական գործ է հարուցվել 81 անձի նկատմամբ: Կրոնական դավանանքի և համոզմունքի պատճառով զինվորական ծառայությունից խուսափել են հինգ քաղաքացիներ: 75 անձանց նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Աշնանային զորակոչի ընթացքում մեկ անձի նկատմամբ շարունակվում է քրեական գործի նախաքննությունը, չնայած վերջինս ցանկություն է հայտնել մեկնել զինծառայության:

Զինվորական ծառայությունից կրոնական դավանանքի և համոզմունքների պատճառով բոլոր անձինք համարվում են «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության ներկայացուցիչներ:
Այս տվյալները վկայում են, որ շարունակվում է չգործել «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը: Դա պայմանավորված է նրանով, որ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը իր էությամբ շարունակում է կրել պատժիչ բնույթ (ծառայության ժամկետը ավելի երկար է, քան սովորական զինծառայությունը, այլընտրանքային ծառայության անցնողները գտնվում են զինվորական հսկողության տակ, այլընտրանքային ծառայության իրականացման պայմանները նվաստացնում են մարդու արժանապատվությունը):
Զինվորական ծառայությունից խուսափողները և հետախուզվող անձինք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք առանց հաշվառումից դուրս գալու մեկնել են այլ երկրներ մշտական բնակության և շարունակում են հանդիսանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ:

# ԳԼՈՒԽ 5

## Զինապարտության փոխհարաբերությունները կարգավորող օրենսդրության վերլուծություն

Հայաստանի Հանրապետությունում 2008 թ-ի գարնանային և աշնանային զորակոչերի ընթացքում վեր են լուծվել զինվորական ծառայությունը կարգավորող հետևյալ իրավական փաստաթղթերը, որոնցով կարգավորվում է զինվորական ծառայությունը.

- ՀՀ Սահմանադրություն
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք
- ՀՀ Քրեական օրենսգիրք
- «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենք
- «Զինապարտության մասին» ՀՀ օրենք
- «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք
- «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին»ՀՀ օրենք
- ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 4-ի N-1680-Ն որոշումը (Տուբերկուլյոզի դեմ ազգային ծրագրի հաստատման, ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 1-ի N-216 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին)
- ՀՀ կառավարության 2004 թ. ապրիլի 22-ի N-587-Ն որոշումը (նախազորակոչային ու զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների առողջական վիճակի գնահատման, բժշկական փորձաքննության անցկացման, բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգը հաստատելու մասին)
- ՀՀ կառավարության 1999 թ. դեկտեմբերի 7-ի N-747 հրամանը (ՀՀ քաղաքացիական բժշկական հիմնարկներում զինապարտների (զորակոչիկների) բժշկական հետազոտման կարգը հաստատելու մասին)
- ՀՀ կառավարության 2007 թ. ապրիլի 26-ի N-492 որոշումը (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններին, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վարժարանի և Հնդկաստանի Կալկաթայի մարդասիրական ճեմարանի սաներին պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու և զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին)
- ՀՀ կառավարության 2002 թ. օգոստոսի 29-ի N-139-Ն որոշումը (Օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական կամ գիտակրթական հաստատություններ ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը հաստատելու մասին)
- ՀՀ կառավարության 2004 թ. մարտի 4-ի N-264-Ն որոշումը (Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին)
- ՀՀ կառավարության 2005 թ. մարտի 10-ի N-271-Ն որոշումը (Այլընտրանքային ծառայություն անցնելու մասին դիմումները քննարկող հանրապետական հանձնաժողովի ստեղծման, գործունեության կարգը և անդամների կազմը սահմանելու մասին):

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2008 Թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զորակոչի և ընդհանրապես զինվորական ծառայության նկատմամբ բացակայում են հասարակական կամ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմները: ՀՀ Սահմանադրությամբ նշված վերահսկողությունը կրում է հռչակագրային բնույթ: Մասնավորապես, ՀՀ կառավարությունը որոշում է ընդունում այս կամ այն անձին ազատել պարտադիր զինվորական ծառայությունից: Այսինքն, անձն ազատվում է իր սահմանադրական պարտականությունները կատարելուց, սակայն տվյալ որոշման նպատակահարմարության մասին ոչ ոք չի կարող կարծիք արտահայտել: Այստեղ բացարձակ առումով բացակայում է պետական մարմնի գործողությունների կանխատեսելիության սկզբունքը:

2. Բժշկական քննությունը և հետազոտությունը իրականացնելու ընթացակարգերին ըստ էության ծանոթ են լինում միայն բժշկական մասնագիտություն ունեցող անձինք, որոնք առնչություն են ունենում զորակոչիկի հետ: Անձը չի տիրապետում իր առողջական վիճակի վերաբերյալ բժշկական եզրակացությանը: Բուժզննության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմը ապահովող իրավական ակտերը մատչելի չեն քաղաքացիներին: Արդյունքում զինված ուժերում հայտնվում են անձինք, որոնք ենթակա կամ պիտանի չեն զինվորական ծառայության և ընդհակառակը, անձինք չեն զորակոչվում, սակայն իրենց բոլոր տվյալներով պարտավոր են զորակոչվելու զինված ուժեր:

3. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով խախտվում է քաղաքացիության ձեռքբերման իրավունքը: Քաղաքացիություն ստանալը իրավունք է, այլ ոչ թե պարտականություն: Սակայն նշված իրավանորմով անձը, ով մինչև 1995 թ. հուլիսի 5-ից հետո մեկ տարվա ընթացքում այլ երկրի քաղաքացիություն չի ընդունել, ճանաչվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Այս նորմով խախտվում է բազմաթիվ մարդկանց իրավունքներ: Օրինակ, եթե անձը 1994 թ-ին ծնվել է Հայաստանի Հանրապետությունում և նա ծնողների հետ 1997թ-ին առանց հաշվառումից դուրս գալու մեկնել է այլ երկիր, նա համարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, եթե նույնիսկ ձեռք է բերել այլ երկրի քաղաքացիություն: Հետևաբար, նա սահմանադրական պարտականություն ունի երկրի պաշտպանությանը մասնակցելու առումով: Այդ պատճառով, բազմաթիվ մարդկանց նկատմամբ, ովքեր հանդիսանում են այլ երկրի քաղաքացի, Հայաստանի Հանրապետությունում հարուցված են քրեական գործեր, և նրանք գտնվում են հետախուզման մեջ` ժամկետային զինվորական ծառայության հերթական զորակոչից խուսափելու հիմքով:
«Հայաստանի Հանրապետության Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են ճանաչվում` Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող նախկին ՀԽՍՀ քաղաքացիները, ովքեր մինչև Սահմանադրության ուժի մեջ մտնելը ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն կամ հրաժարվել են դրանից` սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:

4. Նախազորակոչի և զորակոչի ընթացքում զորակոչիկների բժշկական հետազոտությունը և համապատասխան բժշկական օգնությունը (ամբուլատոր և ստացիոնար) իրականացվում է պետական միջոցների հաշվին: Սակայն նորմատիվ ակտերում կա էական բաց, որի հետևանքով մարդկանց մոտ ծագում են խնդիրներ: Մարդուն, որը բնակվում է մարզում, ուղեգիր տալու միջոցով ուղարկում են այս կամ այն բժշկական հաստատություն (կառավարության կողմից հաստատված ցանկի համապատասխան բժշկական հաստատություն), նրան չի տրամադր-

վում համարժեք գումար ճանապարհածախսը և մայրաքաղաքում իր սնունդը հոգալու համար: Սոցիալապես անապահով վիճակում գտնվող ընտանիքների զորակոչի ենթակա անձը հարկադրված չի հայտնում իր առողջական խնդիրների մասին, որպեսզի լրացուցիչ ֆինանսական խնդիրներ չունենա:

5. Զորակոչը ապահովող իրավակիրառ պրակտիկայում տեղի ունի խտրական վերաբերմունք: Օրինակ, 2007 թ. ապրիլի 26-ին, ՀՀ Կառավարությունը զինվորական ծառայությունից ազատել է Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի 13 հոգևորականների, իսկ տարկետման իրավունք է տվել թվով 43 հոգևորականների: Որոշման մեջ չկան պատճառաբանություններ, թե հատկապես ինչի համար է տրվում տարկետումը կամ ինչի համար է ազատվում անձը զինվորական ծառայությունից: Սակայն պարզ է, որ ազատումը և/կամ տարկետումը պայմանավորված է նրանց կրոնական համոզմունքներով: ՀՀ կառավարության որևէ որոշմամբ ոչ Առաքելական եկեղեցու անդամ հանդիսացող անձի նկատմամբ տարկետում կամ ազատում չի իրականացվել: Հակառակ դրան, այն անձինք, որոնք վկայակոչելով իրենց հոգևոր համոզմունքները՝ հրաժարվում են այլընտրանքային կամ զինվորական ծառայությունից, ենթարկվում են քրեական պատասխանատվության: Այս պրակտիկան հանդիսանում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 9-րդ և 14-րդ հոդվածների խախտում:

6. Զորակոչային հանձնաժողովների որոշումների, գործողությունների կամ անգործության վերաբերյալ բողոքների քննարկման թափանցիկությունը և հասարակական վերահսկողությունը օրենսդրությամբ ապահովված չէ: Պրակտիկայում չեն կիրառվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

# ԳԼՈՒԽ 6

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լոռու մարզում 2008 թ. գարնանային և աշնանային զորակոչերի մոնիթորինգի արդյունքների հիման վրա բացահայտված խնդիրների վերաբերյալ ներկայացվում են հետևյալ առաջարկությունները, որոնց իրականացումը կնպաստի զորակոչի ընթացքում քաղաքացիների իրավունքների պաշտպանության ապահովմանը և զորակոչի նկատմամբ քաղաքացիների վստահության բարձրացմանը.

1. Պաշտպանության նախարարության կողմից իրազեկման աշխատանքների իրականացում զորակոչի կազմակերպման բոլոր փուլերում քաղաքացիների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ
2. հստակեցնել զորակոչի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ հետագա բյուրոկրատական քաշքշուկները նվազեցնելու համար
3. որպես պարտադիր պայման զորակոչիկներին հանձնել զինվորական բուժզննության եզրակացությունը
4. հանրապետական բուժզննության անցկացման համար ամբողջապես փոխհատուցել զորակոչիկների տրանսպորտային, սննդի և օթևանի համար անհրաժեշտ ծախսերը
5. հանրապետական զինվորական կոմիսարիատի կողմից լրատվական միջոցներով կրթական հաստատություններում անհրաժեշտ է լայնորեն իրազեկել տարկետման վերաբերյալ օրենսդրական նորմերը, այդ թվում՝ հիվանդությունների ցանկը յուրաքանչյուր զորակոչից առաջ
6. համապատասխանեցնել «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը եվրոպական չափանիշներին՝ այլընտրանքային ծառայության ինստիտուտի ներդրման համար

ՀԱՎԵԼՎԱԾ 1

HELSINKI CITIZENS` ASSEMBLY VANADZOR OFFICE

*59 Tigran Metsi st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68, E-mail: hcav@hcav.am*

# ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարցումը իրականացվում է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից «Զորակոչի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ձևավորում» ծրագրի շրջանակներում: Այն նպատակ ունի բացահայտել 2008 թ-ի Լոռու մարզում աշնանային ու գարնանային զորահավաքի ընթացքում գոյություն ունեցող խնդիրները և զորակոչիկների խախտված իրավունքները:

1. Անուն, Ազգանուն ______________________________

2. Տարիքը ______________________________

3. Հասցեն /քաղաք, գյուղ, հեռախոս/______________________________

4. Կրթությունը

☐ **Միջնակարգ** ☐ **Մասնագիտական** ☐ **Բարձրագույն** ☐ **Թերի բարձրագույն**

5. Զբաղմունքը______________________________

6. Հանդիսանում եք Հայաստանի Հանրապետության քաղաքացի

☐ **Այո** ☐ **Ոչ**

7. Ամուսնացա՞ծ եք

☐ **Այո** ☐ **Ոչ**

8. Եթե այո, ունե՞ք երեխաներ,

☐ **Այո** ☐ **Ոչ**

9. Քանի՞ երեխա ունեք

☐ **1** ☐ **2** ☐ **3** ☐ **այլ**

10. Ունե՞ք արդյոք

☐ **հայր** ☐ **մայր** ☐ **քույր** ☐ **եղբայր**

11. Ձեր նկատմամբ ձևակերպված է արդյո՞ք խնամակալություն:

☐ **Այո** ☐ **Ոչ**

12. Ե՞րբ և ո՞ր տարածքի զինկոմիսարիատի կողմից եք կցագրվել /հաշվառվել/ նկարագրել

______________________________

______________________________

13. Ե՞րբ եք առաջին անգամ վերցվել հաշվառման /կցագրման/ և ո՞վ է հայտնել զինկոմիսարիատում հաշվառման /կցագրման/ մասին:

______________________________

______________________________

14. Կցագրման /հաշվառման/ ժամանակ ձեզ բացատրել են արդյո՞ք կցագրման / հաշվառման/ նպատակը

☐ **Այո** ☐ **Ոչ**

15. Կցագրման /հաշվառման/ ժամանակ ձեզ բացատրել են արդյո՞ք, որպես ապագա զորակոչիկ, Ձեր իրավունքներն ու պարտականությունները

☐ **Այո** ☐ **Ոչ**

Եթե այո, ապա ո՞վ է բացատրել

______________________________

16. Ե՞րբ եք ծանուցվել զինկոմիսարիատ ներկայանալու մասին (ամիս, ամսաթիվ) և ո՞ր տարածքի (քաղաքը, մարզը) զինկոմիսարիատի կողմից եք զորակոչվել

______________________________

______________________________

______________________________

17. Ինչպե՞ս եք տեղեկացվել զինկոմիսարիատ ներկայանալու մասին

______________________________

______________________________

18. Ծանուցման ընթացքում ինչպիսի՞ն է եղել զինկոմիսարիատի աշխատակցի վերաբերմունքը Ձեր և Ձեր ընտանիքի անդամի նկատմամբ

______________________________

______________________________

______________________________

19. Երբ ծանուցագիրը ստացել եք, Ձեր 18 տարին լրացած է եղել, թե՞ ոչ

☐ **Այո** ☐ **Ոչ**

20. Ծանուցագիրը արդյո՞ք ներառում էր

☐ **զինկոմիսարիատ ներկայանալու նպատակը և ժամկետները**

☐ **լիազոր մարմնի ստորագրությունը և կնիքը**

☐ **Պատասխանատվությունը չներկայանալու դեպքում**

☐ **այլ**

21. Ծանուցագիրը ստանալու համար ստորագրե՞լ եք որևէ տեղ

☐ **Այո** ☐ **Ոչ**

22. Ի՞նչ փաստաթղթեր են ձեզանից պահանջել զորակոչի նպատակով զինկոմիսարիատ ներկայանալու ժամանակ

23. Ո՞վ է ընդունել Ձեզ և արդյո՞ք ճանաչում եք նրան:

☐ **Այո** ☐ **Ոչ**

24. Ներկայացե՞լ է նա:

☐ **Այո** ☐ **Ոչ**

25. Ձեզ փոխհատուցվե՞լ են զինկոմիսարիատ ներկայանալու համար տրանսպորտային ծախսերը, եթե դրա կարիքը եղել է:

☐ **Այո** ☐ **Ոչ**

Եթե այո, որքա՞ն ______________________________

26. Զինկոմիսարիատում, որպես զորակոչիկ, բացատրվել են Ձեր իրավունքներն ու պարտականությունները,

☐ **Այո** ☐ **Ոչ**

27. Եթե այո, ապա ու՞մ կողմից

______________________________

______________________________

28. Դիմե՞լ եք «Այլընտրանքային ծառայություն» անցնելու համար

☐ **Այո** ☐ **Ոչ**

Եթե այո, հանդիպել եք արդյո՞ք խոչընդոտների և ինչպիսի /փաստաթղթեր, ընթացակարգ, վերաբերմունքը ձեր նկատմամբ/

______________________________

______________________________

29. Ունեցե՞լ եք խոչընդոտներ զինկոմիսարիատ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում

☐ **Այո** ☐ **Ոչ**

Եթե այո, խնդրում ենք նկարագրել

______________________________

______________________________

30. Ունեցե՞լ եք խոչընդոտներ զորակոչի վերաբերյալ տեղեկություններ ստանալու կամ փաստաթղթերին ծանոթանալու ընթացքում /կամ անձնական գործերի ուսումնասիրություն/

☐ **Այո** ☐ **Ոչ**

Խնդրում ենք նկարագրել

______________________________

______________________________

31. Ինչպիսի՞ն է եղել վերաբերմունքը զինկոմիսարիատում Ձեր նկատմամբ

______________________________

______________________________

32. Ծանուցագիրը ստանալուց հետո քանի՞ անգամ եք եղել զինկոմիսարիատում:

☐ **մեկ** ☐ **երկու** ☐ **երեք** ☐ **այլ**

33. Ու՞մ հետ եք գնացել զինկոմիսարիատ

______________________________

______________________________

34. Մինչ բանակ զորակոչվելը բժշկական զննություն անցե՞լ եք

☐ **Այո** ☐ **Ոչ**

Եթե այո, ինչու՞ և որտե՞ղ /ո՞ր պոլիկլինիկայում/

______________________________

______________________________

35. Ունե՞ք համապատասխան փաստաթղթեր առողջության հետ կապված խնդիրների վերաբերյալ

☐ **Այո** ☐ **Ոչ**

36. Զորակոչի ընթացքում անցե՞լ եք բժշկական զննություն և հետազոտում

☐ **Այո** ☐ **Ոչ**

Եթե այո, ապա քանի անգամ ☐

37. Եթե անցել եք հանրապետական բժշկական զննություն և հետազոտում, ապա ո՞վ է հոգացել ձեր ճանապարհածախսը

______________________________

______________________________

38. Եթե անցել եք հանրապետական բուժզննում, ապա ի՞նչ տևողությամբ և ի՞նչ ֆինանսական ծախսեր են կատարվել և ինչի՞ համար:

______________________________

______________________________

39. Տեղական զինկոմիսարիատում բժշկական զննությունը և հետազոտումը ի՞նչ է ներառել /ի՞նչ են ստուգել/

______________________________

______________________________

40. Յանրապետական բժշկական զննությունը և հետազոտումը ի՞նչ է ներառել /ի՞նչ են ստուգել/

______________________________

______________________________

41. Ովքե՞ր են ներկա եղել բժշկական զննության ժամանակ

______________________________

______________________________

42. Ինչպիսի՞ն է եղել վերաբերմունքը Ձեր նկատմամբ բժշկական զննության ընթացքում Խնդրում ենք նկարագրել ______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

43. Բժշկական զննությունը և հետազոտումը ստացե՞լ եք անվճար

☐ **Այո** ☐ **Ոչ**

Եթե ոչ, խնդրում ենք նկարագրել, ինչի՞ համար եք վճարել և ինչու՞

______________________________

44. Յնարավորություն ունեցել եք արդյո՞ք ներկայացնելու հանձնաժողովին Ձեր առողջական վիճակի մասին այլ փաստաթղթեր կամ բողոքներ

☐ **Այո** ☐ **Ոչ**

Եթե ոչ, ինչ խոչնդոտներ են եղել ______________________________

45. Ձեր բողոքները առողջական վիճակի վերաբերյալ հաշվի՞ են առնվել հանձնաժողովի կողմից

☐ **Այո** ☐ **Ոչ**

Եթե ոչ, ինչ խոչնդոտներ են եղել ______________________________
______________________________
______________________________

Եթե այո, ինչ քայլեր են ձեռնարկվել ______________________________
______________________________
______________________________

46. Դուք տեղեկացվե՞լ եք զինկոմիսարիատում՝ ծառայության վայրի ընտրության վերաբերյալ օրենսդրությանը:

☐ **Այո** ☐ **Ոչ**

Եթե այո, նկարագրել ______________________________

47. Զինկոմիսարիատում տեղեկացվել եք տարկետման հիմքերի մասին:

☐ **Այո** ☐ **Ոչ**

Եթե այո, նկարագրել ______________________________

48. Մինչ այժմ ստացե՞լ եք տարկետում

☐ **Այո** ☐ **Ոչ**

Եթե այո, ինչի՞ հիման վրա

☐ Ընտանեկան դրության բերումով
☐ Ուսումը շարունակելու համար
☐ Առողջական վիճակի պատճառով
☐ այլ հիմքերով

Եթե այո, ի՞նչ ժամկետով ______________________________

49. Քանի՞ անգամ եք ստացել տարկետում:

☐ **մեկ** ☐ **երկու** ☐ **երեք**

50. Ունեցե՞լ եք արդյոք դժգոհություններ կամ բողոքներ զորակոչի ընթացքում
______________________________
______________________________
______________________________
______________________________

51. Ներկայացրե՞լ եք այդ բողոքները որևէ մարմնի և ինչ ընթացք են դրանք ստացել:
______________________________
______________________________
______________________________

**ՀԱՎԵԼՎԱԾ 2**

**«Քաղաքացիական վերահսկողության ձևավորումը զորակոչի գործընթացի նկատմամբ» ծրագրի շրջանակներում 2008 թ-ի գարնանային և աշնանային զորակոչի ընթացքում ուսումնասիրված դեպքերի և իրավական աջակցության արդյունքների նկարագրությունը**

| | |
|---|---|
| **1. 2. Դիմած քաղաքացու անուն ազգանունը** | Ա. Կ. |
| **Ամսաթիվը** | 15.05.2008 |
| **Խնդրի նկարագրությունը** | Ա. Կ.-ի կողմից տրամադրված տեղեկատվությամբ՝ 2008 թ-ի ապրիլի 9-18-ը հետազոտվել է ՀՀ առողջապահության նախարարության «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն ՓԲԸ-ում, այնուհետև անցել է նյարդային հետազոտություն: Նյարդային հետազոտության արդյունքների մասին տեղեկատվություն Ա. Կ.-ին չի տրվել: «Արմենիա» բժշկական կենտրոնում հետազոտության եզրակացությամբ՝ տրվել է միզաքարային հիվանդության ախտորոշում: Այնուհետև Վանաձորի զինվորական կոմիսարի կողմից տրվել է նոր ուղեգիր՝ ք. Երևանի «Էրեբունի» բ/կ ստացիոնար, ամբուլատոր հետազոտման՝ միզաքարային հիվանդության ախտորոշումը  հաստատելու համար: ***Ա. Կ.-ը նշում է, որ ինքը չի կարող անցնել կրկնակի բժշկական հետազոտություն միզաքարային հիվանդության ախտորոշման հաստատման համար, քանի որ համապատասխան ֆինանսական միջոցներ չունի, զինկոմիսարիատն էլ տրամադրում է ընդամենը 1200 դրամ:*** |
| **Խնդրի լուծման ուղղությամբ կազմակերպության կողմից ձեռնարկված գործողությունները (ներառյալ դիմումները, գրությունները, հարցումները՝ պատրաստված սույն խնդրի կապակցությամբ, ում է հասցեագրվել և երբ է պատրաստվել, բժիշկ-փորձագետի կողմից ձեռնարկված գործողությունները** | 1. 15.05.2008թ. ԵՊ- 301 պաշտոնական գրությամբ դիմել ենք ՀՀ Պաշտպանության նախարարություն՝ Ա. Կ.-ի առողջական վիճակի համակողմանի հետազոտման համար, միաժամանակ բժիշկ-փորձագետից փորձել ենք ճշտել, թե արդյոք անհրաժեշտ է կրկնակի բժշկական փորձաքննություն: 2. 10.06.2008թ. ԵՊ 320 գրությամբ նորից ենք դիմել ՊՆ, հանրապետական զորակոչային հանձնաժողովին և Վանաձորի զինկոմիսարիատին՝ նորից առողջական վիճակի հետազոտություն իրականացնելու համար:<br><br>07.06.2008 թ. բժիշկ-փորձագետը հետազոտել է  Ա. Կ.-ին, նրա մոտ հայտնաբերել է երիկամների և նյարդային խնդիրներ, առաջարկել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակին գրություն պատրաստել ՊՆ-ին և հանրապետական զորակոչային հանձնաժողովին նոր հետազոտում անցկացնելու վերաբերյալ: 27,06,2008թ. բժիշկ-փորձագետը նոր համակողմանի հետազոտության է ենթարկել Ա. Կ.-ին, որի արդյունքում միզաքարային հիվանդությունը  հաստատվել է: |
| **Արդյունքը** | ՀՀ պաշտպանության նախարարությունը կազմակերպության կողմից ուղարկված գրությանը սահմանված կարգով չի պատասխանել: ՀՀ պաշտպանության նախարարությունից հեռախոսով տեղեկացրել են, որ մեր կողմից գրության մեջ բարձրացված խնդիրների անմիջական լուծումն ու հսկողությունը պաշտոնական գրությամբ հանձնարարել է հանրապետական զորակոչային հանձնաժողովին, ինչպես նաև Վանաձորի զինվորական կոմիսարիատին: Վանաձորի զինվորական կոմիսարիատը, սակայն, թերացել է /ժամանակային առումով ուշ են միջոցներ ձեռնարկել/, քանի որ մինչև Վանաձորի զինվորական կոմիսարիատի կողմից ձեռնարկված քայլերը մեզ հետ համագործակցող  երկրորդ հանրապետական բժշկական փորձաքննության արդյունքներով՝ Ա. Կ.-ի մոտ որևէ հիվանդություն չի հայտնաբերվել: Ա. Կ.-ի զինվորական ծառայությանը պիտանելիության վերաբերյալ համապատասխան եզրակացություն է տրվել:<br>2. Կազմակերպության կողմից 10.06.2008 թ. ՀՀ Պաշտպանության նախարարություն է ուղարկվել 2-րդ՝ ԵՊ-320 գրությունը, որով բողոքարկվել է հանրապետական զորակոչային հանձնաժողովի որոշումը, միևնույն ժամանակ պահանջվել է առողջական վիճակի նոր հետազոտություն: Նշանակվել է նոր հետազոտություն Վանաձորի զինվորական կոմիսարիատի հսկողությամբ: Վանաձորի զինկոմիսարիատի աշխատակիցներն այս անգամ արդեն իրենք են Ա. Կ.-ին տարել Երևան բժշկական հետազոտության, ինչպես նաև հանրապետական զինվորական հանձնաժողովի կողմից եզրակացություն տալու համար: |

| | |
|---|---|
| **2. Դիմած քաղաքացու անուն ազգանունը** | Ռուդոլֆ Սողոմոնյան |
| **Ամսաթիվը** | 12.05.2008 |
| **Խնդրի նկարագրությունը** | Ռուդոլֆ Սողոմոնյանի կողմից տրամադրված տեղեկատվությամբ՝ 2002թ-ին նա ներկայացել է բնակության վայրի զինկոմիսարիատ, որտեղ զինվորական ծառայությանը պիտանի լինելու մասին բժշկական եզրակացության համար անցել է համապատասխան բժշկական քննություն: Այնուհետև ուղեգրով բուժզննում է անցել Երևանի Նորք-Մարաշ օրթոպեդիայի և վնասվածքաբանական ինստիտուտում: Բժշկական եզրակացության հիման վրա հանրապետական զորակոչային հանձնաժողովը որոշում է ընդունել առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից 3 տարի ժամկետով տարկետում տրամադրելու մասին:<br>2005թ. Ռուդոլֆ Սողոմոնյանը Երևանի Նորք-Մարաշ օրթոպեդիայի և վնասվածքաբանական ինստիտուտում նոր բժշկական հետազոտություն է անցել, որի եզրակացության հիման վրա հանրապետական զորակոչային հանձնաժողովը որոշում է ընդունել նրան առողջական վիճակի պատճառով ևս 3 տարի ժամկետով տարկետում տրամադրելու մասին:<br>2008թ. Ռուդոլֆ Սողոմոնյանը Երևանի Նորք-Մարաշ օրթոպեդիայի և վնասվածքաբանական ինստիտուտում անցել է երրորդ բժշկական հետազոտությունը: Բժշկական հետազոտության արդյունքում տրված եզրակացության մեջ Ռուդոլֆ Սողոմոնյանի առողջական վիճակի բարելավման ոչ մի փոփոխություն չի արձանագրվել:<br>Վանաձորի զինկոմիսարիատից, սակայն, Ռոդուլֆ Սողոմոնյանին բազմաթիվ տեղեկացրել են, որ քաղաքից չպետք է բացակայի, քանի որ ճանաչվել է զինվորական ծառայությանը պիտանի և զորակոչվելու է բանակ: |
| **Խնդրի լուծման ուղղությամբ կազմակերպության կողմից ձեռնարկված գործողությունները (ներառյալ դիմումները, գրությունները, հարցումները՝ պատրաստված սույն խնդրի կապակցությամբ, ում է հասցեագրվել և երբ է պատրաստվել, բժիշկ - փորձագետի կողմից ձեռնարկված գործողությունները** | Կազմակերպության 12.05.2008թ. ԵՊ-297 պաշտոնական գրությամբ դիմել ենք ՀՀ Պաշտպանության նախարարություն՝ Ռուդոլֆ Սողոմոնյանի առողջական վիճակի հետազոտության նպատակով նոր բժշկական քննություն նշանակելու և Ռոդոլֆ Սողոմոնյանի պարտադիր զինվորական ծառայության հարցը ՀՀ օրենքով սահմանված կարգով լուծելու համար: |
| **Արդյունքը** | Ի պատասխան 21.05.2008 թ-ին ստացել ենք ՀՀ զինվորական կոմիսարի թիվ 2/1950 գրությունը՝ ուղղված Վանաձորի զինվորական կոմիսարին Ռուդոլֆ Սողոմոնյանի կրկին անգամ կենտրոնական բժշկական հանձնաժողով ներկայանալու և նախագահին ուղղված դիմումի վերաբերյալ զեկույցի ներկայացման մասին: 03.06.08 թ. Ռոդուլֆ Սողոմոնյանին կանչել են երկրորդ հանրապետական բժշկական փորձաքննության: Զինծառայության պիտանելիության վերաբերյալ եզրակացությունը, սակայն, տրվելու է 13.06.2008թ.: |

| | |
|---|---|
| **3. Դիմած քաղաքացու անուն ազգանունը** | Գասպարյան Անահիտ |
| **Ամսաթիվը** | 16.05.2008 |
| **Խնդրի նկարագրությունը** | Անահիտ Գասպարյանի տրամադրած տեղեկատվությամբ՝ տղան ունի հոդային հիվանդություն, որը սրվում է ցուրտ եղանակին և վերջույթների ֆունկցիաներն այդ ընթացքում լրիվ խախտվում են: 2008թ. հունիսի 4-ի համար տղային բանակ զորակոչելու ծանուցագիր է տրվել: Կա որևէ արտոնություն նման հիվանդության առկայությամբ ծառայության անցնելու համար: |
| **Խնդրի լուծման ուղղությամբ կազմակերպության կողմից ձեռնարկված գործողությունները (ներառյալ դիմումները, գրությունները, հարցումները՝ պատրաստված սույն խնդրի կապակցությամբ, ում է հասցեագրվել և երբ է պատրաստվել, բժիշկ - փորձագետի կողմից ձեռնարկված գործողությունները** | Խնդիրը քննարկվել է բժիշկ-փորձագետի հետ, որը զորակոչիկին լրացուցիչ հետազոտության էր ենթարկելու: |
| **Արդյունքը** | Զորակոչիկը հրաժարվել է բժշկական փորձաքննություն անցնել: Մոր կողմից պահանջված երկրորդ հանրապետական բժշկական փորձաքննության արդյունքների համաձայն՝ զորակոչվել է տարբերակված՝ շարային ծառայության: |
| **4. Դիմած քաղաքացու անուն ազգանունը** | Անուշ |
| **Ամսաթիվը** | - |
| **Խնդրի նկարագրությունը** | Օրենքով սահմանված են արդյո՞ք որոշակի արտոնություններ ծնողազուրկ զորակոչիկների համար: |
| **Խնդրի լուծման ուղղությամբ կազմակերպության կողմից ձեռնարկված գործողությունները (ներառյալ դիմումները, գրությունները, հարցումները՝ պատրաստված սույն խնդրի կապակցությամբ, ում է հասցեագրվել և երբ է պատրաստվել, բժիշկ - փորձագետի կողմից ձեռնարկված գործողությունները** | Նրան տեղեկացվել է օրենքով սահմանված արտոնությունները, այն է՝ երկողմանի և միակողմանի ծնողազուրկ զորակոչիկներն օգտվում են պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ժամանակ բնակության վայրին մոտ գտնվող զորամասում ծառայութան անցնելու իրավունքից: Բնակության վայրին մոտ գտնվող մոտ զորամաս է համարվում մինչև 100 կմ հեռավորության վրա գտնվող զորամասը: |
| **Արդյունքը** | Դեռ բանակ չի զորակոչվել, որպեսզի պարզ լինի, թե օրենքով սահմանված կարգը պահպանվել է, թե ոչ: 24.05.08 թ. զորակոչվել է բանակ Լոռու մարզի Պուշկինո գյուղ, որը գտնվում է զորակոչիկի բնակության վայրից մոտ 80 կմ հեռավորության վրա: |

| | |
|---|---|
| **5. Դիմած քաղաքացու անուն ազգանունը** | Անուշ |
| **Ամսաթիվը** | 20.05.2008 |
| **Խնդրի նկարագրությունը** | Զորակոչիկի մայրը 1-ին խմբի հաշմանդամ է, քույրը հիվանդ է, բայց հաշմանդամության խումբ չունի, ինքը՝ զորակոչիկը, ունի նյարդային հիվանդություն: Անցել է բժշկական հետազոտություն, սակայն արդյունքների մասին դեռևս ոչինչ չեն ասել, բանակ զորակոչվելու համար համապատասխան ծանուցում չեն տվել: |
| **Խնդրի լուծման ուղղությամբ կազմակերպության կողմից ձեռնարկված գործողությունները (ներառյալ դիմումները, գրությունները, հարցումները՝ պատրաստված սույն խնդրի կապակցությամբ, ում է հասցեագրվել և երբ է պատրաստվել, բժիշկ - փորձագետի կողմից ձեռնարկված գործողությունները** | Խորհուրդ է տրվել սպասել մինչև Վանաձորի զինկոմիսարիատը պաշտոնական տեղեկություն տա բանակ զորակոչվելու վերաբերյալ, այնուհետև նորից դիմել մեզ: Եթե զինվորական կոմիսարիատից ծանուցում ուղարկեն բանակ զորակոչելու վերաբերյալ, ապա բժիշկ-փորձագետի հետ հիվանդության վերաբերյալ քննարկումից հետո որոշումը կբողոքարկվի ՀՀ Պաշտպանության նախարարություն: |
| **Արդյունքը** | Բժշկական փորձաքննության արդյունքների հիման վրա զորակոչիկը ճանաչվել է ծառայության համար ոչ պիտանի: |
| **6. Դիմած քաղաքացու անուն ազգանունը** | Ա. Տ. |
| **Ամսաթիվը** | 05.06.2008 |
| **Խնդրի նկարագրությունը** | 2004թ. զորակոչիկը ենթարկվել է բժշկական փորձաքննության, տրվել է 3-րդ աստիճանի հարթաթաթության ախտորոշում, որի հիման վրա տրվել է 3 տարի տարկետում: 2007թ. սեպտեմբերին նորից է անցել բժշկական հետազոտություն, որի արդյունքում նորից տրվել է 3-րդ աստիճանի հարթաթաթության ախտորոշում: Այս անգամ սակայն զորակոչվել է բանակ և արդեն 8 ամիս է ծառայում է Լեռնային Ղարաբաղում: |
| **Խնդրի լուծման ուղղությամբ կազմակերպության կողմից ձեռնարկված գործողությունները (ներառյալ դիմումները, գրությունները, հարցումները՝ պատրաստված սույն խնդրի կապակցությամբ, ում է հասցեագրվել և երբ է պատրաստվել, բժիշկ - փորձագետի կողմից ձեռնարկված գործողությունները** | Բժշկական հետազոտության համապատասխան եզրակացությունները ներկայացվել են մեզ հետ համագործակցող անկախ բժիշկ-փորձագետին:<br><br>07.06.2008 թ. բժիշկ-փորձագետը ծանոթացել է Ա. Տ.-ի առողջական վիճակը ներկայացնող փաստաթղթերին, հայտնել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակին, որ փաստաթղթերում նշված հիվանդությունների դեպքում օրենքը չի նախատեսում տարկետում: |
| **Արդյունքը** | Բժիշկ-փորձագետի եզրակացությամբ 2004թ. հարթաթաթության 3-րդ աստիճանի դեպքում բանակ չեն զորակոչվել, իսկ 2007թ. ՀՀ կառավարության որոշմամբ փոփոխություններ է իրականացվել պարտադիր զինվորական ծառայությունից ազատող հիվանդությունների շարքում և հարթաթաթության 3-րդ աստիճանի դեպքում զորակոչիկը զորակոչվում է բանակ: |

| | |
|---|---|
| **7. Դիմած քաղաքացու անուն ազգանունը** | Ա. Զ. |
| **Ամսաթիվը** | 13.06.2008 |
| **Խնդրի նկարագրությունը** | Զորակոչիկների խնդիրների ուսումնասիրության ժամանակ հայտնաբերվել է, որ Ալավերդու բնակիչ Ա. Զ.-ը բողոքներ է ներկայացրել իր առողջական վիճակի վերաբերյալ հանրապետական բժշկական հանձնաժողովին, քանի որ համաձայն չի եղել վերջինիս որոշման հետ: Զորակոչիկը բողոքում է հարթաթաթության հետևանքով ոտքի ցավերից և կրծքավանդակի առաջնապատի դեֆորմացիայից: Հանձնաժողովը գտել է, որ նրա մոտ առկա է 2-րդ, 3-րդ աստիճանի հարթաթաթություն, իսկ կրծքավանդակի առաջնապատի շեղումը ազդեցություն չի թողնում ներքին օրգանների ֆունկցիաների վրա: |
| **Խնդրի լուծման ուղղությամբ կազմակերպության կողմից ձեռնարկված գործողությունները (ներառյալ դիմումները, գրությունները, հարցումները՝ պատրաստված սույն խնդրի կապակցությամբ, ում է հասցեագրվել և երբ է պատրաստվել, բժիշկ - փորձագետի կողմից ձեռնարկված գործողությունները** | Զորակոչիկը իր ծնողների հետ դիմել է այս ծրագրում ընդգրկված բժիշկ-փորձագետին: 13.06.2008 թ. բժիշկ-փորձագետը ուղարկել է դիմողին ռենտգեն հետազոտման, որի արդյունքում հաստատվել է հանրապետական հանձնաժողովի ԱԿՏ -3462 որոշումը: |
| **Արդյունքը** | Զորակոչիկ Ա. Զ.-ը ծանուցագիր է ստացել 25.06.08 թ. և բժիշկ փորձագետի եզրակացությամբ նա համարվում է պիտանի սահմանափակ ծառայության համար: |
| **8. Դիմած քաղաքացու անուն ազգանունը** | Վ. Ա. |
| **Ամսաթիվը** | 10.06.2008 |
| **Խնդրի նկարագրությունը** | Զորակոչիկների խնդիրների ուսումնասիրության ժամանակ հայտնաբերվել է, որ Ալավերդու բնակիչ Ա. Վ.-ն նշանակվել է կրկնակի բուժզննման, որի համար նա դեռևս մասնակցության կանչ չի ստացել և չի ստացել նախորդ զննման եզրակացությունը: 2008թ. մարտին առաջին անգամ կանչել են Ալավերդու զինկոմիսարիատ, ուղեգրով ուղարկել են Երևան՝ առողջական վիճակի հետազոտության: Երևանի օրթոպեդիայի և վնասվածքաբանության ինստիտուտում հետազոտվել է, 2008թ. մարտի 28-ին տրվել է բժշկական եզրակացություն, որի համաձայն ախտորոշվել է կրծքավանդակի դեֆորմացիա, առանց ֆունկցիոնալ խանգարման: 2008թ.ապրիլին ուղեգրով հետազոտվել է «Արմենիա» բժշկական կենտրոնում՝ թոքային բաժանմունքում, ախտորոշել են կրծքավանդակի առաջնային պատի ռախիտիկ դեֆորմացիա, առանց թոքերի արտաքին շնչառական ֆունկցիայի խանգարման: Գանգատներ է ունեցել նաև շնչառական համակարգից, սակայն համապատասխան հետազոտություն չեն իրականացրել: 2008թ. մայիսի 23-ին ուղեգրով հետազոտվել է «Արմենիա» բժշկական կենտրոնում, իրականացրել են սրտի կարդիոգրամա, ախտորոշել են կրծքավանդակի դեֆորմացիա, առանց ֆունկցիոնալ խանգարման: Սրտի աշխատանքը նորմալ է: Բժշկական հետազոտության արդյունքներով ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար և 29.06.2008թ. ծանուցագրով պարտավորվել է ներկայանալ ծառայության անցնելու համար: |
| **Խնդրի լուծման ուղղությամբ կազմակերպության կողմից ձեռնարկված գործողությունները (ներառյալ դիմումները, գրությունները, հարցումները՝ պատրաստված սույն խնդրի կապակցությամբ, ում է հասցեագրվել և երբ է պատրաստվել, բժիշկ-փորձագետի կողմից ձեռնարկված գործողությունները** | 28.06.2008 թ. ԵՊ326 պաշտոնական գրությամբ դիմել ենք ՀՀ Պաշտպանության նախարարություն՝ խնդրելով նշանակել նոր առողջական վիճակի հետազոտություն /գրությունն ուղարկվել է ֆաքսի միջոցով/: |
| **Արդյունքը** | Նույն օրը՝ 28.06.2008 թ-ին, զանգահարել են և զորակոչիկին տեղեկացրել, որ 2008 թ-ի հունիսի 29-ին ներկայանալու է զինկոմիսարիատ: |

| | |
|---|---|
| **9. Դիմած քաղաքացու անունազգանունը** | Ա. Հ. |
| **Ամսաթիվը** | 20.07.2008 |
| **Խնդրի նկարագրությունը** | Մեզ է դիմել Ա. Հ.-ը հաշվառման կանգնելու հետ խնդիր ունենալու հարցով: 1985 թվականից տառապել է հեմոֆիլիա տեսակի հիվանդությամբ: 1993թ. Վանաձորի զինկոմիսարիատում կցագրվել է, անցել բուժզննություն: 1993թ-ին մեկնել է ՌԴ, 2004թ. վերադարձել է Հայաստանի Հանրապետություն և ներկայացել ոստիկանության Վանաձորի տարածքային բաժին: Նույն օրը մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327 հոդ. 1-ին մասով և խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին: 2007թ. սեպտեմբերի 26-ին ՀՀ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի որոշմամբ հաստատվել է վերը նշված հիվանդության առկայությունը:<br>2007թ. հոկտեմբերի 4-ի նախաքննությունը իրականացնող մարմնի որոշմամբ հարուցված քրեական գործը կարճվել է գործողություններում հանցակազմի բացակայության հիմքով և վերացվել է ընտրված «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը:<br>Մեր առաջարկությամբ 2008թ. հուլիսի 8-ին դիմել է Վանաձորի զինվորական կոմիսար Ա. Թումանյանին հաշվառում անցնելու համար, սակայն ստացել է պատասխան, որ նա իրավասու չէ նմանատիպ գործերով հաշվառման հարցի լուծման համար: Դիմում է կազմվել` ուղղված ՀՀ զինվորական կոմիսար գեներալ-մայոր Կ. Քոչունցին: |
| **Խնդրի լուծման ուղղությամբ կազմակերպության կողմից ձեռնարկված գործողությունները (ներառյալ դիմումները, գրությունները, հարցումները` պատրաստված սույն խնդրի կապակցությամբ, ում է հասցեագրվել և երբ է պատրաստվել, բժիշկ - փորձագետի կողմից ձեռնարկված գործողությունները** | Առաջարկվել է դիմել Վանաձորի զինկոմիսարիատ, այնուհետև բացասական պատասխան ստանալուց հետո դիմում է կազմվել պարտադիր զիվորական ծառայության չանցած հարցերով միջգերատեսչական հանձնաժողովին, ՀՀ զինվորական կոմիսար գեներալ մայոր Կ. Քոչունցին |
| **Արդյունքը** | |
| **10. Դիմած քաղաքացու անունազգանունը** | Չի ցանկացել ներկայանալ |
| **Ամսաթիվը** | 24.10.2008 |
| **Խնդրի նկարագրությունը** | Մեզ է դիմել զորակոչիկի մայրը իր որդու խնդրով, որն ունի կարճատեսություն: Ըստ սեփական նախաձեռնության` դիմել են պոլիկլինիկա, որի կողմից տրված ախտորոշման համաձայն զորակոչիկն ունի կարճատեսություն /-5-ից մինչև -6/: Կան համապատասխան փաստաթղթեր: Զինվորական կոմիսարիատում բժշկական հանձնաժողովը սահմանել է -5,5 և ուղարկվել է հանրապետական բուժզննման, որտև սահմանել են -5, բայց զորակոչիկը համաձայն չէ այդ ախտորոշմանը: |
| **Խնդրի լուծման ուղղությամբ կազմակերպության կողմից ձեռնարկված գործողությունները (ներառյալ դիմումները, գրությունները, հարցումները` պատրաստված սույն խնդրի կապակցությամբ, ում է հասցեագրվել և երբ է պատրաստվել, բժիշկ - փորձագետի կողմից ձեռնարկված գործողությունները** | Ծրագրի անձնակազմը առաջարկել է դիմել ծրագրում ներգրավված անկախ փորձագետին: Սակայն զորակոչիկի մայրը չի ցանկացել դիմել: |
| **Արդյունքը** | |

| | |
|---|---|
| **11. Դիմած քաղաքացու անուն ազգանունը** | Չի ցանկացել ներկայանալ |
| **Ամսաթիվը** | 03.11.2008 |
| **Խնդրի նկարագրությունը** | Մեզ է դիմել զորակոչիկը, որը 2005թ-ի աշնանային զորակոչից հիվանդության պատճառով տարկետում (3 տարով) էր ստացել: 2008թ. աշնանային զորակոչի ժամանակ Վանաձորի զինկոմիսարիատի կողմից ուղարկվել էր Երևան՝ օրթոպեդիկ հիվանդանոց՝ լրացուցիչ հետազոտման: Այնուհետև Վանաձորում անցնելով գլխավոր բժշկական զննություն՝ նրան հայտնել են, որ նա ենթակա է ծառայության ու տվել են ծանուցագիր: Սակայն նա գտնում է, որ իր առողջական վիճակը չի բարելավվել, ընդհակառակը՝ ավելի է վատացել: |
| **Խնդրի լուծման ուղղությամբ կազմակերպության կողմից ձեռնարկված գործողությունները (ներառյալ դիմումները, գրությունները, հարցումները՝ պատրաստված սույն խնդրի կապակցությամբ, ում է հասցեագրվել և երբ է պատրաստվել, բժիշկ - փորձագետի կողմից ձեռնարկված գործողությունները** | Ծրագրի անձնակազմը առաջարկել է դիմել ծրագրում ներգրավված անկախ փորձագետին: Փորձագետը ուսումնասիրելով բժշկական փաստաթղթերը և զորակոչիկի առողջական վիճակը՝ հայտնել է, որ նման առողջական խնդիրներ ունեցողներին զորակոչում են ոչ շարային ծառայության՝ մեկնաբանելով, որ այդ հիվանդության առկայության դեպքում որոշակի ծանրության բարձրացնելու ժամանակ նրա առողջական վիճակը կվատթարանա: |
| **Արդյունքը** | Զորակոչիկը դիմում է գրել ՀՀ Պաշտպանության նախարարություն, երկրորդ անգամ անցել է հանրապետական բուժզննում, որի արդյունքում պարզվել է, որ նա պիտանի չէ ծառայության: |

| | |
|---|---|
| **12. Դիմած քաղաքացու անուն ազգանունը** | Ա. Գ. |
| **Ամսաթիվը** | 10.11.2008 |
| **Խնդրի նկարագրությունը** | Զորակոչիկը 8-րդ դասարանում կցագրվել է Վանաձորի զինկոմիսարիատում: Զինկոմիսարիատում, ըստ նրա ունեցած բժշկական փաստաթղթերի, տեղեկացրել են, որ նա տեսողության հետ կապված խնդիրներ ունի, որի վերաբերյալ տեղեկությունը գրանցվել է նրա անձնական քարտում: 2006 թ-ին նա հետազոտվել է քաղաքային հիվանդանոցում: Հետազոտության արդյունքների հիման վրա տեսողության խնդիրները կարգավորելու նպատակով բժիշկները խորհուրդ են տվել ակնոց կրել: Զորակոչիկի խոսքերով, տեսողությունը ժամանակի ընթացքում ավելի է վատացել և ներկայումս չի կարողանում զանազանել իրերն ու առարկաները նույնիսկ 1 մետր հեռավորությունից: 18 տարին լրանալուն պես Վանաձորի զինկոմիսարիատից ծանուցագիր է ստացել և ներկայացել է, որտեղից միանգամից ուղեգրել են «Արմենիա» հանրապետական բժշկահետազոտական կենտրոն՝ տեսողության հետ կապված խնդիրները պարզելու նպատակով: «Արմենիա» հանրապետական բժշկահետազոտական կենտրոնում իրականացված հետազոտության արդյունքները զորակոչիկին չեն ներկայացվել, դրանք միանգամից ուղարկվել են Վանաձորի զինկոմիսարիատ, որտեղից բազմաթիվ կարգով մերժել են զորակոչիկին որևէ տեղեկություն տրամադրել հետազոտության արդյունքների վերաբերյալ: Հետազոտության արդյունքների հիման վրա զորակոչիկը ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար և 2008 թ. դեկտեմբերի 12-ին զինծառայության ներկայանալու ծանուցագիր է ստացել: Զորակոչիկը գտնում է, որ «Արմենիա» հանրապետական բժշկահետազոտական կենտրոնում տեսողության զննությունը մանրամասն չի իրականացվել և բավականին թերի է եղել, որի պատճառով էլ հետազոտության արդյունքները չեն համապատասխանել տեսողության հետ կապված իր ունեցած իրական խնդիրներին: |
| **Խնդրի լուծման ուղղությամբ կազմակերպության կողմից ձեռնարկված գործողությունները (ներառյալ դիմումները, գրությունները, հարցումները՝ պատրաստված սույն խնդրի կապակցությամբ, ում է հասցեագրվել և երբ է պատրաստվել, բժիշկ - փորձագետի կողմից ձեռնարկված գործողությունները** | 1. Զորակոչիկի տեսողության խնդիրների վերաբերյալ իրական պատկերացում և հավաստի տեղեկություններ ունենալու համար կազմակերպության օգնությամբ զորակոչիկը լրացուցիչ հետազոտվել է անկախ բժիշկ-փորձագետի մոտ: Անկախ բժիշկ փորձագետի եզրակացության համաձայն զորակոչիկի տեսողությունը գտնվել է սահմանային գոտում և հետևաբար, նա չէր կարող ճանաչվել ծառայության համար պիտանի, սակայն զորակոչվել է զինծառայության:<br>2. Կազմակերպությունը օգնել է պատրաստել գրավոր հարցում՝ ուղղված Վանաձորի զինկոմիսարին՝ իր բուժհետազոտության եզրակացության վերաբերյալ տեղեկություն ստանալու համար: |
| **Արդյունքը** | Զորակոչիկը դիմում է գրել ՀՀ զինվորական կոմիսարին: Վերջինս էլ հրահանգել է Վանաձորի զինվորական կոմիսարին՝ Գ. Ա.-ին ներկայացնել կենտրոնական բժշկական հանձնաժողով և ներկայացված դիմումի մասին նիստին զեկուցել նախագահին:<br>Այնուամենայնիվ, չնայած նրա տեսողության հետ կապված խնդիրների առկայությանը և անկախ բժիշկ-փորձագետի եզրակացությանը՝ Գ. Ա.-ը զորակոչվել է զինծառայության: |

| | |
|---|---|
| **13. Դիմած քաղաքացու անուն ազգանունը** | Խարազյան Արթուր |
| **Ամսաթիվը** | 05.12.2008 |
| **Խնդրի նկարագրությունը** | 2008թ մարտին քաղաքացին դիմել է Մարշալ Արմենակ Խամփերյանցի անվան ռազմական ինստիտուտ՝ բարձրագույն կրթություն ստանալու համար: Ըստ ուսումնական հաստատության ընդունելության կարգի՝ անցել է կենտրոնացված բուժզննություն: Բուժզննության արդյունքների համաձայն, նա չի կարող սովորել ռազմական ինստիտուտում: Այսինքն, ինչպես ընդունող հանձնաժողովը հայտնել է, նրա մոտ առկա են եղել առողջական խնդիրներ, թեև նա հնարավորություն չի ունեցել այդ արդյունքների հետ ծանոթանալ: Խնդիրը կայանում է նրանում, թե ինչպես նա կարող է վերցնել հետազոտության արդյունքները: |
| **Խնդրի լուծման ուղղությամբ կազմակերպության կողմից ձեռնարկված գործողությունները (ներառյալ դիմումները, գրությունները, հարցումները՝ պատրաստված սույն խնդրի կապակցությամբ, ում է հասցեագրվել և երբ է պատրաստվել, բժիշկ - փորձագետի կողմից ձեռնարկված գործողությունները** | Քանի որ զինծառայության հետ կապված հետազոտությունների արդյունքները ուղարկվում են քաղաքացու վերջին բնակության վայրի զինկոմիսարիատ, ծրագրի աշխատակազմի կողմից կազմվել է գրություն՝ ուղղված Վանաձորի զինկոմիսարիատ՝ 2008 թ. մարտին Խամփերյանցի անվան ռազմական ավիացիայի ինստիտուտի կողմից անցած հետազոտության արդյունքները ստանալու համար: |
| **Արդյունքը** | |
| **14. Դիմած քաղաքացու անուն ազգանունը** | Ա. Ն. |
| **Ամսաթիվը** | 15.12.2008 |
| **Խնդրի նկարագրությունը** | *Թ. Ն.-ի պատմածը որդու՝ Ա. Ն.-ի զինկոմիսարիատում բժշկական զննություն և հետազոտում անցնելու վերաբերյալ:*<br>Զորակոչիկի մայրը դիմել է՝ պատմելով, որ իր տղաներին, ուղարկել էին ավտոդպրոց՝ սովորելու, մեկ ամիս անց նրանց այնտեղից դուրս են արել՝ պատճառաբանելով, որ նրանք հիվանդ են և, երբ հետագայում տղաները օրինական կարգով՝ հիվանդության պատճառով ազատվեն բանակից, ավտոդպրոցի տնօրինությունը խնդիրներ կունենա՝ կապված անօրինական վարորդական վկայական տալու հետ: Միաժամանակ ավտոդպրոցի տնօրինությունն առաջարկել է պայման, ըստ որի տղաները, եթե վճարեին 110 000- 120 000 դրամ, նրանց կթույլատրեին ավտոդպրոցում ինքնաֆինասավորմամբ սովորելու: Սակայն տղաները այդպես էլ չեն մասնակցել ավտոդպրոցի դասերին:<br>Ա.-ն միշտ բողոքել է մեջքի ցավերից, /բացի մշտական ցավերը, ցանկացած իր վերցնելուց անմիջապես մեջքի սուր ցավեր, ոտքի ցավեր է ունենում, երկար չի կարողանում քայլել, շուտ է հոգնում, մշտապես ունի գլխացավ և քթից գրեթե ամեն օր արյուն է հոսում/:<br>Սկզբում տղան մենակ է գնացել բուժզննումների՝ ամաչելով գնալ մայրիկի հետ: Ծանուցագիրը ստանալուց հետո /2008 թ-ի նոյեմբերի 24- ի համար/ դիմել են թաղային բժշկին, որը զորակոչիկին ուղարկել է նյարդաբանի մոտ, վերջինս էլ ուղարկել է ռենտգեն հետազոտման: Պարզվել է, որ զորակոչիկը ողնաշարի հետ խնդիրներ ունի: Այն է՝ ողնաշարի դիսկերի հեռացվածություն և խախտվածություն, և տրվել է «Դիսկոգեն ռադիկալապատիա, մշտական ցավային սինդրոմով» ախտորոշումը:<br>Ռենտգենը և թաղային բժշկի ախտորոշման պատասխանը մայրը ներկայացրել է Վանաձորի զինվորական կոմիսարիատի գլխավոր բժշկին, որը նայել և պատասխանել է. «Հասարակ պատճառ է, անպայման ուզում ես մի հասարակ բանի պատճառով տղուդ ազատես»:<br><br>Բոլոր բժշկական զննությունների ժամանակ զորակոչիկը բողոքել է ոտքերի, ողնաշարի ցավից և հայտնել է, որ մշտապես քթից արյուն է հոսում, սակայն բժշկական հանձնաժողովը ուշադրություն չի դարձրել բողոքներին: Գրել են, որ լավ է և պիտանի է ծառայության համար և հայտնել են, որ «քթից արյուն գալը խնդիր չի»: Զորակոչիկի բոլոր հիվանդություններն առանց ստուգելու վերագրել են դրանք որպես մրսածության հետևանք: |

Ծանուցագիրը տալուց հետո 3 ամիս շարունակ յուրաքանչյուր բուժզննման ժամանակ կանչել են զորակոչիկին, երկար ժամանակ դրսում սպասեցրել, հետո անհիմն հետաձգել են բուժզննումը: Նույնիսկ զորակոչիկը ջերմություն է ունեցել, նրանք չեն համաձայնվել ստուգել կամ ուղեգիր տալ, որպեսզի նրա հարազատները իմանան նրա ջերմության բուն պատճառը, առաջարկել են ուժեղ անտիբիոտիկ ներարկել,առանց ջերմության պատճառն իմանալու, սակայն մայրը հրաժարվել է, քանի որ չի իմացել, թե հատկապես ինչի հետ է կապված այդ ջերմությունը: Առանց մեջքի ցավերն ախտորոշելու առաջարկել են ցավազրկող հաբեր, սակայն մայրը կրկին հրաժարվել է այդ հաբերը խմեցնել որդուն:

Վերջին բուժզննման ժամանակ, երբ, ընդհանրապես զորակոչիկի գանգատները առողջական խնդիրների հետ կապված հաշվի չեն առնվել, մայրը որդու հետ գնացել է զինվորական կոմիսարիատ, սակայն նրան ներս չեն թողել: Զորակոչիկը մի քանի անգամ ներս է մտել, նրան դուրս են հանել, չեն թողել ներսում սպասել և դրսում սառած կանգնել են, չնայած մոր խնդրանքներին, որ որդին շուտ է հոգնում և երկար չի կարողանում կանգնած մնալ, ցրտից շուտ է հիվանդանում, այնուամենայնիվ, որդուն ամենավերջինն են ներս կանչել և ասել են, որ պետն այդտեղ չէ, իսկ տղայի գործերը կապված է անձամբ պետի հետ: Այդ օրն ուրբաթ է եղել, /իսկ շաբաթ, կիրակի օրերին զինվորական կոմիսարիատը չի աշխատում/, հետևաբար մայրը մտավախություն է ունեցել, որ որդուն, առանց լիարժեք բուժզննություն անցկացնելու, երկուշաբթի օրը՝ /2008 թ-ի դեկտեմբերի 1-ին/ կտանեն բանակ, որոշել է բարձրանալ պետի քարտուղարուհու մոտ՝ դիմում գրելու: Այդ ժամանակ աստիճանների վրա տեսել է պետին /փաստորեն զորակոչիկին խաբել էին՝ ասելով, որ պետը բացակայում է/: Մայրը մոտեցել է և մանրամասն պատմել ամեն ինչ, բացատրել, որ տղան առողջության հետ կապված լուրջ խնդիրներ ունի, ուզում է, որ անպայման հետազոտվի, որպեսզի հիվանդ չմեկնի բանակ: Պետը լսելով մոր պատմածը, ուղեգրել է հանրապետական բուժզննման: Ուղեգրի վրա մատիտով գրել են. «Աջ նստաներվի բորբոքում»: Զորակոչիկի գործերի մեջ էլի մատիտով գրել են. «Աջ նստաներվի բորբոքում»: Երբ զորակոչիկը վերադարձել է հանրապետական բուժզննումից, նրա գործերի վրա մատիտով գրված «Աջ նստաներվի բորբոքում» ախտորոշումը ջնջել են և գրիչով գրել իսկական ախտորոշումը՝ «Դիսկոգեն ռադիկալապատիա, մշտական ցավային սինդրոմով»

Մայրը զորակոչիկի հետ գնացել է հանրապետական բուժզննման, նախքան բուժզննումն անցնելը, որպես ծնող նկատել է, որ հանրապետական բուժզննության անցկացման ժամանակ լավ չեն վերաբերվել զորակոչիկներին, մասնավորապես՝ նրանցից շատերին մնալու տեղ և հարմարություն չեն տրամադրել: Եղել են զորակոչիկներ, որոնք 8-9 օր է, գտնվել են այնտեղ, սակայն բացի միջանցքից, որտեղ ոչ անկողին է եղել, ոչ քնելու այլ հարմարություն, նրանց ոչինչ չեն տրամադրել: Հարցին, թե ինչու բոլորին քնելու տեղ չեն հատկացնում, պատասխանել են, որ այնտեղ տեղ չկա, բայց մայրը համոզված է, որ տեղ եղել է, պարզապես չեն ցանկացել տեղ տալ: Ծնողներին ընդհանրապես տեղ չեն հատկացրել, առաջարկելով, որ նրանք գնան իրենց երեխաների անկողնում հարմարվեն՝ նկատի չունենալով սեռային տարբերությունը և այն հանգամանքը, որ իրենց հատկացրած մահճակալն անչափ փոքր է նույնիսկ միայնակ քնելու համար, նաև այն, որ նույն սենյակում 5-6 տղա է մնում:

Հանրապետականի բժշկուհին նայելով ուղեգրին՝ նյարդաբանին հայտնել է. «Աջ նստաներվի բորբոքում» ախտորոշումը, սակայն մայրը միջամտել է և ասել, որ իր տղան ողնաշարից է բողոքում, քայլելիս ոտքը ձգվում է և շուտ է հոգնում, նա հարցրել է, թե ինչ փաստաթուղթ ունի մայրը իր մոտ , որը կարող է հաստատել մոր խոսքերը, նա էլ ցույց է տվել ռենտգենի պատասխանը, նա պատճենահանել և կցել է զորակոչիկի գործերի մեջ: Հետազոտելով զորակոչիկի ողնաշարը՝ հաստատվել է թաղային բժշկի ախտորոշումը՝ «Դիսկոգեն ռադիկալապատիա, մշտական ցավային սինդրոմով», և բժշկուհին բանավոր հայտնել է, որ այդ ախտորոշմամբ զորակոչիկը 99 % -ով բանակից կազատվի:

Հանրապետական բուժզննության արդյունքում տրված ախտորոշումը բերել են Վանաձորի զինկոմիսարիատ, ցույց են տվել, հաջորդ օրը կրկին նշանակել են բուժզննում, նորից այդ զորակոչիկին վերջինն են ընդունել՝ նրան առաջարկելով սպասել նյարդաբանին, իբր նա այնտեղ չի, տեղ է գնացել, բայց կրկին խաբել էին զորակոչիկին, քանի որ նյարդաբանն այնտեղ է եղել և այլ զորակոչիկների է ստուգել: Մայրը բողոքել է, որ իր տղային միշտ վերջինն են ընդունել, իսկ այնտեղ շատ ցուրտ է, ամեն բուժզննումից հետո իր հիվանդ երեխան ջերմություն է ունենում,սակայն հերթապահը չի թողել՝ ասելով, որ ինքը մեղավոր չէ, իրեն այդպես են կարգադրել: Զորակոչիկը մտել է բուժզննման, և արդյունքում, նրա համար կրկին հանրապետական բուժզննում են նշանակել:

*Զինակոչիկ Արմեն Ներսիսյանի պատմածը բուժզննության վերաբերյալ*

Հանրապետական բուժզննման ժամանակ, մի քանի օր այնտեղ մնալուց հետո նա ցանկացել է իրերը հավաքել և վերադառնալ Վանաձոր: Հանրապետական հիվանդանոցի աշխատակազմի անդամներից մեկը մոտեցել և հարցրել է, թե ինչ է պատահել, զորակոչիկը հայտնել է, որ ինքը գիտի, որ հանրապետական հիվանդանոցում մնացած յուրաքանչյուր օրվա համար 700 դրամ են վճարում, նա հարցրել է, թե որտեղից գիտի, զորակոչիկը պատասխանել է, որ իր ծանոթն է ասել, և զորակոչիկին տրամադրել են 3 օրվա մնալու գումարը 4-ի փոխարեն: Օրերով սպասել է թղթերին, երբ գնացել է դրանց ետևից, նյարդաբանական բաժնի աշխատակիցը պատճառաբանել է, որ թղթերը դեռ ստորագրված չեն, սակայն, ըստ զորակոչիկի, Համիկը ձգձգել է այդ փաստաթղթերի տրամադրումը: Զորակոչիկին ասել է, որ գոնե 500 դրամ տա, որ զորակոչիկի գործը համակարգիչ գցեն, վերջինս էլ ասել է, որ պետք չէ իր գործը համակարգիչ գցեն, ժամը 9: 00 - 15 :30 սպասել է, առանց գումար տալու վերցրել թղթերը և եկել տուն:
Վերջին բուժզննության ժամանակ բժիշկներն իրար մեջ խորհրդակցել են. նրանցից մեկն առաջարկել է. «Գրենք, թող հանրապետականում պառկի» հետո ասել են «Բուժում նշանակենք, 6 ամիս հետաձգենք, թող Վանաձոր պառկի»: Սակայն չի ընդունվել այդ առաջարկը՝ պատճառաբանելով, որ 6 ամիսը երկար է և ուշ կլինի: Մեկն էլ ասել է. «Գեներալնի գրենք, թող իրեն նվեր լինի» հետո ավելացրել. «Արագացրեք, տեսնենք, թե էն մի ախպորն ինչ ենք անում»: Արդյունքում տվել են «գեներալնու» թուղթը:
Մոր հետ գնացել են բուժզննման, այնտեղ զորակոչիկի հագուստը հագին իբր ստուգել են: Բժիշկներից մեկը մատով մեջքին սեղմել է, սակայն ինքը ոչինչ չի զգացել, քանի որ հագուստով է եղել: Այնուհետև այդ բժիշկը փոքրիկ մուրճով հարվածել է ոտքերին:
Նրան ասել են, որ գնա դռան մոտ սպասի:
Նյարդաբանին ևս հայտնել է, որ գլուխն ու վիզն էլ է ցավում, չի ստուգել, հարցրել է, թե գլխացավը ինչից է, զորակոչիկը պատասխանել է, որ չգիտի, նյարդաբանը ստուգել է և ասել, որ դռան մոտ սպասի, կանչել է քիթ - կոկորդի մասնագետին, վերջինս եկել, ստուգել է, ոչինչ չի ասել, ինչ-որ բան է գրել, որի մասին ինքը տեղյակ չէ, ինչքան խնդրել է քիթ – կոկորդի հետազոտման պատասխանը, չեն տրամադրել, հետո ստուգել են ատամներն ու ասել են, որ սպասի: 20-30 րոպե սպասելուց հետո թղթերը բերել են, գնացել է գեներալի մոտ, նա էլ նայել է թղթերը ու ասել «Հանգիստ, թեթև ծառայություն»:

Վերադարձի ժամանակ ավտոբուսում հերթապահ /թղթեր տանող- բերող/ Ա.-ն տվել է զորակոչիկի ծանուցագիրը և ասել է, որ ստորագրի: Զորակոչիկը համամիտ չի եղել բուժզննման արդյունքների հետ՝ իրականում ունենալով առողջական լուրջ խնդիրներ և չի իմացել, թե ինչպես բողոքարկի այն և չի իմացել ծանուցագիրը չստորագրելու դեպքում ինչ պատասխանատվության կենթարկվի, ուստի հերթապահ Ա.-ին հարցրել է, թե ինչ կլինի, եթե չստորագրի: Հերթապահը ոչինչ չի բացատրել, միայն ասել է, որ զորակոչիկը կարող է գրել, որ հրաժարվում է ստորագրել, ինքն էլ չիմանալով պատասխանատվության ենթարկվելու մասին, գրել է, որ հրաժարվում է: Սակայն, երբ ավտոբուսը գազի լցակայանում կանգնել է, տղաներն իրեն ասել են, որ չգրի, որ հրաժարվում է, հակառակ դեպքում նրա գործերը կուղարկեն ոստիկանություն՝ որպես ծառայությունից խուսափողի:
Ավտոբուսում հերթապահին խնդրել է, որ ծանուցագիրը տա, որ ստորագրի, նա հրաժարվել է տալ: Վանաձոր հասնելու ժամանակ ինքը Ա.-ին հարցրել է, թե ինչ է անելու այն թուղթը, որի վրա գրել է հրաժարվում է, նա պատասխանել է, որ երկուշաբթի օրն ուղարկելու է ոստիկանություն: Զորակոչիկը կրկին խնդրել է, որ ծանուցագիրը տան, նա էլ տվել է, զորակոչիկը ստորագրել է, իսկ թուղթը, որտեղ գրված է եղել. «հրաժարվում եմ» պատռել է, սակայն դրել է գրպանը՝ ասելով. «Պետք կգա»: Այնուհետև տեղեկացրել, որ 2008 թ-ի դեկտեմբերի 19 –ին եղբոր հետ ներկայանա զինկոմիսարիատ:

*«3 հոգուց միայն ինձ են ծանուցագիր տվել, չնայած 13 հոգու մեջ միայն ես էի իսկապես հիվանդ: Ավտոդպրոց չենք կարող նստել, որովհետև հիվանդ ենք, բայց բանակի համար հիվանդ չենք»,- նշել է զորակոչիկը:*

Բանակ զորակոչվելուց հետո մի քանի օր անց, զորակոչիկը տեղափոխվել է հիվանդանոց, քանի որ զինծառայության ընթացքում առողջական լուրջ խնդիրներ է ունեցել՝ զորամասում շարային վարժությունների ժամանակ 2 անգամ ուշաթափվել է: Զորամասից նրան ուղարկել են հանրապետական հիվանդանոց՝ ախտորոշելով, որ նա հիվանդ է էպիլեպսիայով, սակայն հիվանդանոցում ժխտվել է այդ ախտորոշումը: Հիվանդանոցում զորակոչիկը հետազոտվել է

| | |
|---|---|
| | վնասվածքաբանական բաժնում, չնայած, մայրը պնդում է, որ իր որդուն պետք է հետազոտեին նյարդաբանական բաժնում: Զինծառայության ընթացքում զորակոչիկի մոտ ի հայտ է եկել նաև դող, ցնցումներ, որը նախկինում նրա մոտ առկա չի եղել: Հիվանդանոցում բուժզննումն ու հետազոտումը տևացել է 20 օր: |
| **Խնդրի լուծման ուղղությամբ կազմակերպության կողմից ձեռնարկված գործողությունները (ներառյալ դիմումները, գրությունները, հարցումները՝ պատրաստված սույն խնդրի կապակցությամբ, ում է հասցեագրվել և երբ է պատրաստվել, բժիշկ - փորձագետի կողմից ձեռնարկված գործողությունները** | 1. Ծրագրի անձնակազմը խորհուրդ է տվել դիմել ծրագրում ներգրավված անկախ փորձագետին:<br>2. Համաձայն բժիշկ փորձագետի զննության՝ կազմակերպության կողմից 2008 թ-ի դեկտեմբերի 16-ին ուղարկվել է գրություն ուղղված ՀՀ Պաշտպանության նախարարությանը, որով մեր կազմակերպությունը պահանջել է, որ Ա. Ն.-ի համար նշանակվի նոր բուժզննություն կամ հետաձգվի նրա բանակ զորակոչվելը 6 ամիս ժամանակով՝ բուժման նպատակով:<br>3. Կրկին կազմակերպությունը 2008 թ-ի դեկտեմբերի 22-ին ուղարկել է գրություն՝ ուղղված Պաշտպանության նախարարություն և ՀՀ զինկոմիսարիատ, որպեսզի նրա համար նշանակվի նոր բուժզննություն կամ հետաձգվի նրա բանակ զորակոչվելը 6 ամիս ժամանակով:<br>4. 2008թ. հունվարի 8-ին կազմակերպության կողմից երրորդ անգամ ուղարկվել է գրություն ՀՀ Պաշտպանության նախարարությանը, այս անգամ բաց նամակի ձևով, որով պահանջվել է աջակցել Ա. Ն.-ի իրավունքների պաշտպանության հարցում՝ հակառակ դեպքում նրա վիճակի հետագա վատթարացման ողջ պատասխանատվությունը կընկնի ՀՀ Պաշտպանության նախարարության վրա:<br><br>Բժիշկ-փորձագետը հետազոտել է Ա. Ն.-ին, ախտորոշել, որ նրա մոտ առկա է «Դիսկոգեն ռադիկալապատիա, մշտական ցավային սինդրոմով»: Առաջարկել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակին գրություն պատրաստել Պաշտպանության նախարարությանը և հանրապետական զորակոչային հանձնաժողովին նոր հետազոտում անցկացնելու վերաբերյալ, քանի որ զորակոչիկը ունի սուր ողնաշարային ցավեր, որոնք նշված չեն ախտորոշման մեջ և զորակոչիկը կարիք ունի բուժման: |
| **Արդյունքը** | 1. Ի պատասխան կազմակերպության կողմից Պաշտպանության նախարարին ուղղված գրության՝ նշանակվել է գլխավոր բուժզննություն: Սակայն բուժզննության արդյունքում նրան տրվել է ծանուցագիր, համաձայն որի, նա համարվել է պիտանի ծառայության համար:<br>2. 2008թ դեկտեմբերի16-ին կազմակերպության կողմից ուղարկվել է 2-րդ գրությունը՝ ուղղված Պաշտպանության նախարարությանը և հանրապետական զինկոմիսարիատին, որով բողոքարկվել է հանրապետական զորակոչային հանձնաժողովի որոշումը, միևնույն ժամանակ պահանջվել է առողջական վիճակի նոր հետազոտություն: Սակայն Պաշտպանության նախարարությունը և հանրապետական զինկոմիսարիատը կազմակերպության կողմից ուղարկված գրությանը սահմանված կարգով չեն պատասխանել և Ա. Ն. զորակոչվել է ք.Սիսիանի 60913 զորամաս՝ զինվորական ծառայության: Զորակոչիկի մայրը դեռևս համագործակցում է կազմակերպության հետ՝ հուսալով, որ իր որդուն կտրվի տարկետում՝ առողջական հիմքով:<br>3. Ի պատասխան դեկտեմբերի 16-ին կազմակերպության կողմից ուղարկված գրության՝ Պաշտպանության նախարարությունը ուղարկել է գրություն, որով տեղեկացնում է, որ Արմեն Ներսիսյանը կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից կրկնակի փորձաքննություն անցնելով՝ ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար:<br>4.ՀՀ զինվորական կոմիսարիատը պատասխան գրությամբ 2008 թ-ի դեկտեմբերի 27-ին հայտնել է կազմակերպության կողմից ուղարկված գրությանը, որ Ա. Ն.-ը կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից կրկնակի փորձաքննություն անցնելով՝ ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար: Տվյալ գրությամբ տեղեկացնելով, որ հանձնաժողովի որոշումը ընդունված է Ա. Ն.-ի առողջության օբյեկտիվ ստացիոնար հետազոտությունների հիման վրա և վերջնական է:<br>5. Կազմակերպության կողմից ուղարկված բաց նամակը հրապարակվել է www. lragir.am էլեկտրոնային էջում և «Առավոտ» օրաթերթում:<br>6. Ի պատասխան կազմակերպության կողմից 08.01.09թ. ուղարկված բաց նամակի՝ Պաշտպանության նախարարության կողմից 19.01.09թ. հայտնվում է, որ ներկայումս անց է կացվում Ա. Ն.-ի առողջական վիճակի լրացուցիչ հետազոտություն,որի արդյունքների մասին լրացուցիչ կտեղեկացվի:<br>7.Քանի որ ներկայումս զորակոչիկի վիճակը անբավարար է ծառայության համար, զորակոչիկի մայրը դիմում է գրել ուղղված ՀՀ ԶՈւ ԳՇ պետին, որով խնդրել է նորից հետազոտել իր որդուն: |

| | |
|---|---|
| | 8. Ի պատասխան դիմումին՝ ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության կողմից ստացվել է գրություն, որով հայտնվում է, որ Ա. Ն.-ը ստացիոնար հետազոտում և բուժում է անցել ՀՀ ՊՆ Զանգեզուրի կայազորային և կենտրոնական կլինիկական զինհոսպիտալներում, որի արդյունքում վնասվածքաբանական և թերապևտիկ առումով պաթոլոգիա չի հայտնաբերվել և նա համաձայն ՀՀ ՊՆ 378-06 հր.9 ”գ”, 15 “գ” հոդվածի, ճանաչվել է պիտանի ոչ շարային ծառայության: |

**ՀԱՎԵԼՎԱԾ 3**

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel.( հեռ ) (374 322) 4 22 68
E-mail: hcav@hcav.am

ՀՀ Պաշտպանության նախարար
Սեյրան Օհանյանին

**8 հունվարի 2008 թ.**
ՀՊ-448

**Բաց նամակ**

Հարգելի պարոն նախարար,

2008 թ-ին բազմիցս մեր կազմակերպություն է դիմել զինծառայող Ա Ն-ի մայրը՝ իր որդու իրավունքների պաշտպանության հարցով:

2008 թ-ի դեկտեմբերի 16-ին մեր կազմակերպությունը դիմել էր Ձեզ՝ հայտնելով, որ զորակոչիկ Ա Ն-ը տառապում է սուր գլխացավով, ունենում է քթի հաճախակի արյունահոսություն, ոտքերի շուտ հոգնելու հետևանքով չի կարողանում երկար քայլել, ունի նաև մեջքի և պարանոցի շրջանում ցավեր: Նա ստացել է «Դիսկոգեն ռադիկալապատիա, մշտական ցավային սինդրոմով» ախտորոշումը քաղաքային բժշկի կողմից, որը հետագայում հաստատվել է հանրապետական բուժզննության ժամանակ: Նա ունի սուր ողնաշարային ցավեր, որոնք նշված չեն ախտորոշման մեջ, հաշվի չեն առնվել տեղական բուժզննման ժամանակ, սակայն հաստատվել է անկախ բժիշկ-փորձագետի կողմից, և զորակոչիկը կարիք ունի բուժման: Մենք խնդրել էինք Ա Ն-ի համար նշանակել նոր բուժզննություն կամ հետաձգել նրա բանակ զորակոչվելը վեց ամիս ժամանակով՝ բուժման նպատակով:

2008 թ-ի դեկտեմբերի 19-ին զորակոչիկ Արմեն Ներսիսյանը ներկայացել է բուժզննության, որտեղ որոշվել է, որ զորակոչիկը պիտանի է ծառայության, և նրա բողոքները իր առողջության վերաբերյալ հաշվի չէին առնվել: Նրան նույնիսկ չի տրամադրվել բուժզննության արդյունքները:

2008 թ-ի դեկտեմբերի 22-ին մենք վերստին դիմել էինք Ձեզ՝ խնդրելով աջակցել Արմեն Ներսիսյանի իրավունքների պաշտպանության հարցում և տրամադրել տարկետում՝ բուժման նպատակով:

Այնուամենայնիվ, մենք պատասխան չստացանք մեր որևէ նամակին, որը կասկածի տակ է դնում այն հանգամանքը, թե արդյոք նամակները հասնում են ՀՀ Պաշտպանության նախարարին:

2009 թ-ի հունվարի 8-ին քաղաքացի Թ Մ-ը կրկին մեզ է դիմել, որի որդին՝ Ա Ն-ը, այժմ ծառայում է Սիսիանի 60913 զորամասում: Նա զորակոչվել է ՀՀ զինված ուժերում զինծառայության 2008 թ-ի դեկտեմբերի 22-ին՝ չնայած նրա բազմաթիվ առողջական խնդիրների:

Նույնիսկ զորակոչի օրը՝ դեկտեմբերի 22 ին, Ա Ն-ը ողնաշարային սուր ցավեր և ջերմություն է ունեցել: Հասնելով Սիսիանի 60913 զորամաս՝ նրա առողջական խնդիրները ավելի են վատթարացել /ոտքերի նյարդերը ծգվել են, քայլել չի կարողացել, իսկ ջերմությունը բարձրացել է մինչև 39 և ավելին/: Նա դիմել է բուժկետ և այնտեղ պառկել 2 օր: Նույն վիճակով դուրս է գրվել այն պատճառաբանությամբ, որ ավելին իրավունք չեն ունեցել պահել: Մինչ օրս Արմեն Ներսիսյանը գտնվում է նույն վիճակում, չի կարողանում քայլել, սակայն ամեն օր ստիպված է մասնակցել շարային վարժություններին:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կոչ ենք անում Ձեզ հրապարակավ՝ աջակցելու Ա Ն-ի իրավունքների պաշտպանության հարցում, այլապես նրա վիճակի հետագա վատթարացման ողջ պատասխանատվությունը կընկնի ՀՀ Պաշտպանության Նախարարության վրա:

կազմակերպության նախագահ Ա. Սաքունց

**ՀԱՎԵԼՎԱԾ 4**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

ВОЕННЫЙ КОМИССАР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

THE MILITARY COMMISSAR OF REPUBLIC OF ARMENIA

№ 2/4663
«27» 12 2008թ.

ք. Երևան, Բաբայան 6
c. Yerevan, Babayan 6

կատ.մուտքի 10024

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա.ՍԱՔՈՒՆՑԻՆ

Ձեր սույն թվականի դեկտեմբերի 22–ի թիվ ԵՊ-439 գրությանը հայտնում եմ, որ Վանաձորի զինվարական կոմիսարիատի զորակոչիկ Ա Ն , սույն թվականի դեկտեմբերի 19-ին կրկնակի անգամ փորձաքննվել է ՀՀ կառավարության կողմից ստեղծված կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից և ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար, համաձայն ՀՀ ՊՆ «Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը» հաստատող N 378-2006թ. հրամանի 15 հոդվածի «գ» կետի պահանջների:

Վերը նշված հանձնաժողովի որոշումը ընդունված է Ա. Ն. առողջության օբյեկտիվ ստացիոնար հետազոտումների հիման վրա և վերջնական է:

գեներալ- մայոր Գ. ՔՈՉՈՒՆՑ

կատ.Մարգարյան
տպ.Մարգարյան

**ՀԱՎԵԼՎԱԾ 5**

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան 0088, Գ. Չաուշի փ. 60
Հեռ. 28-72-03
Ֆաքս. 28-50-02
«19» 01 2009թ.
ՊՆ/510-ՎԱ-29

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
**Ա.ՍԱՔՈՒՆՑԻՆ**

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատասխան Ձեր 08.01.09թ. N ԵՊ-448՝ Վանաձորի զինվորական կոմիսարիատի զորակոչիկ Ա. Ն. վերաբերյալ գրության հայտնում եմ, որ դեռևս 2008թ. դեկտեմբերի 24-ին ՊՆ/510-ՎԱ-820 գրությամբ Ձեզ ուղարկվել է պատասխան զորակոչիկ Ա. Ն.-ի վերաբերյալ:

Այնուամենայնիվ հայտնում եմ, որ ներկայումս անց է կացվում Ա. Ն. առողջական վիճակի լրացուցիչ հետազոտություն, որի արդյունքների մասին լրացուցիչ կտեղեկացվի:

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՎԱԳ ՕԳՆԱԿԱՆ -
ՎԱՐՉԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՂԵԿԱՎԱՐ

Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՎԵԼՎԱԾ 6**

## 2008 թ. գարնանային և աշնանային զորակոչերի ընթացքում ՀՀ Պաշտպանության նախարարին, ՀՀ զինվորական կոմիսարին, տարածքային զինվորական կոմիսարներին ուղարկված գրությունների և նրանց պատասխանների նկարագրությունը

| | Ուղարկման ամսաթիվը | Ու՞մ է հասցեագրված | Խնդրի նկարագրությունը | Ստացման ամսաթիվը | Ստացված պատասխանի բովանդակությունը |
|---|---|---|---|---|---|
| 1. | 12.05.08 | ՀՀ Պաշտպանության Նախարարություն | Կազմակերպությունը դիմել է զորակոչիկ Ռուդոլֆ Սեյրանի Սողոմոնյանի առողջական վիճակի հետ կապված խնդրի վերաբերյալ՝ պահանջելով Ռ. Սողոմոնյանին կրկին ներկայացնել կենտրոնական բժշկական հանձնաժողով: | 21.05.08 | Հրահանգվել է Վանաձորի զինկոմիսարիատին՝ զորակոչիկ Ռ. Սողոմոնյանին կրկին ներկայացնել կենտրոնական բժշկական հանձնաժողով: |
| 2. | 15.05.08 | ՀՀ զինվորական կոմիսարիատ | Կազմակերպությունը դիմել է ՀՀ զինվորական կոմիսարին՝ակնկալելով նրա աջակցությունը Լոռու մարզի զինկոմիսարիատների համագործակցությունն ապահովելու հարցում: | 26.05.08 | Հայտնվել է՝ դիմել ՀՀ Պաշտպանության Նախարարություն |
| 3. | 15.05.08 | ՀՀ Լոռու մարզի զորակոչային հանձնաժողով | Կազմակերպությունը դիմել է 2008 թ-ի գարնանային զորակոչի վերաբերյալ, ստանալ տեղեկատվություն, թե.<br>1. Լոռու մարզի զինկոմիսարիատներից քանի հոգի է դիմել այլընտրանքային ծառայության անցնելու համար:<br>2. Քանի քաղաքացի է ենթարկվել քրեական պատասխանատվության պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայության զորակոչից խուսափելու առթիվ: | | Պատասխան չի տրվել |
| | 15.05.08 | ՀՀ Պաշտպանության Նախարարություն | Կազմակերպությունը դիմել է զորակոչիկ Արտակ Կիրակոսյանի առողջական վիճակի համակողմանի հետազոտության և դրան համապատասխան իրական եզրակացության տրամադրման հարցով համապատասխան միջոցառումներ իրականացնելու համար: | | Պատասխան չի տրվել |
| 4. | 02.06.08 | ՀՀ Պաշտպանության նախարարություն | Կազմակերպությունը դիմել է՝ ակնկալելով Պաշտպանության նախարարի աջակցությունը Լոռու մարզի զինկոմիսարիատների համագործակցությունն ապահովելու հարցում: | 11.06.08 | Հայտնել են, որ կազմակերպության կողմից ուղարկված գրությունը ուղարկվել է ՀՀ զինվորական կոմիսարին՝ օրենքի սահմաններում վերոհիշյալ ծրագրի շրջանակներում աջակցելու համար: |
| 5. | 10.06.08 | ՀՀ Պաշտպանության նախարարություն, ՀՀ զինվորական կոմիսարիատ, Վանաձորի զինվորական կոմիսարիատ | Կազմակերպությունը 15.05.2008թ. գրությամբ դիմել էր Պաշտպանության նախարարություն և պատասխան չէր ստացել: Կազմակերպությունը նորից դիմել է համապատասխան կառույցներ՝ Արտակ Կիրակոսյանի կողմից բարձրացված խնդիրների լուծման համար համապատասխան միջոցառումներ իրականացնելու խնդրանքով: | 03.07.08 | Հայտնվել է, որ կազմակերպության գրության համաձայն՝ Վանաձորի զինվորական կոմիսարին գրավոր ցուցում է տրվել ևս մեկ անգամ մանրակրկիտ ուսումնասիրել Ա.Կիրակոսյանի առողջական վիճակը և անհրաժեշտության դեպքում մեկ անգամ ևս ուղարկել հետազոտման, որից զորակոչիկը հրաժարվել է: Հունիսի 28-ին Ա. Կիրակոսյանը ներկայացվել է Կենտրոնական բժշկական հանձնաժողով, որտեղ զննվել է համապատասխան մասնագետների կողմից և կրկին ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6. | 29.06.08 | ՀՀ Պաշտպանության նախարարություն | Կազմակերպությունը դիմել է զորակոչիկ Վաչե Աթաբեկյանի խնդրով: Զորակոչիկը համաձայն չի եղել բժշկական հետազոտությունների արդյունքների և հանրապետական հանձնաժողովի վերջնական որոշման հետ, հետևաբար կազմակերպությունը խնդրել է աջակցել Վաչե Աթաբեկյանի առողջական վիճակի կրկնակի համակողմանի հետազոտության և համապատասխան իրական եզրակացության տրամադրման հարցով համապատասխան միջոցառումներ իրականացնելու համար: | 03.07.08 | Համաձայն կազմակերպության կողմից ուղարկված գրության՝ Վ. Աթաբեկյանը ներկայացվել է Կենտրոնական Բժշկական Հանձնաժողով և նիստին պարզվել է, որ նա իրեն ինքնավնասումներ է հասցրել զինվորական ծառայությունից խուսափելու համար: Նրան տրամադրվել է տարկետում 6 ամիս ժամկետով և ցուցում է տրվել Թումանյանի զինվորական կոմիսարին նյութեր պատրաստել և փոխանցել քննչական մարմիններին՝ միտումնավոր ինքնավնասումներ կատարելու կապակցությամբ զորակոչից խուսափելու համար: |
| 7. | 30.06.08 | Տաշիրի զինվորական կոմիսարիատ | Կազմակերպությունը դիմել է՝ 2008 թ-ի գարնանային զորակոչի վերաբերյալ Տաշիրի զինվորական կոմիսարիատից ստանալ տեղեկատվություն թե՝<br>1. քանի հոգի են զորակոչվել պարտադիր զինծառայության<br>2. քանի հոգի են ստացել տարկետում և ինչ հիմքերով<br>3. քանի հոգի են ստացել տարկետում ա/ առաջին անգամ բ/ երկրորդ անգամ և գ/ երրորդ անգամ<br>4. քանի հոգի են դիմել «Այլընտրանքային ծառայության» անցնելու համար<br>5. քանի զորակոչիկի գործ է ուղարկվել դատախազություն զորակոչից խուսափելու համար: | 28.07.08 | Հայտնել են ՀՀ Լոռու մարզի Տաշիրի զինկոմիսարիատի 2008 թ. գարնանային զորակոչի տվյալները: |
| 8. | 30.06.08 | Սպիտակի զինվորական կոմիսարիատ | Կազմակերպությունը դիմել է՝ 2008 թ-ի գարնանային զորակոչի վերաբերյալ Սպիտակի զինվորական կոմիսարիատից ստանալ տեղեկատվություն թե՝<br>1. քանի հոգի են զորակոչվել պարտադիր զինծառայության<br>2. քանի հոգի են ստացել տարկետում և ինչ հիմքերով<br>3. քանի հոգի են ստացել տարկետում ա/ առաջին անգամ բ/ երկրորդ անգամ և գ/ երրորդ անգամ<br>4. քանի հոգի են դիմել «Այլընտրանքային ծառայության» անցնելու համար<br>5. քանի զորակոչիկի գործ է ուղարկվել դատախազություն զորակոչից խուսափելու համար: | 18.07.08 | Հայտնել են ՀՀ Լոռու մարզի Սպիտակի զինկոմիսարիատի 2008 թ. գարնանային զորակոչի տվյալները: |
| 9. | 30.06.08 | Թումանյանի զինվորական կոմիսարիատ | Կազմակերպությունը դիմել է՝ 2008 թ-ի գարնանային զորակոչի վերաբերյալ Թումանյանի զինվորական կոմիսարիատից ստանալ տեղեկատվություն թե՝<br>1. քանի հոգի են զորակոչվել պարտադիր զինծառայության<br>2. քանի հոգի են ստացել տարկետում և ինչ հիմքերով<br>3. քանի հոգի են ստացել տարկետում ա/ առաջին անգամ բ/ երկրորդ անգամ և գ/ երրորդ անգամ<br>4. քանի հոգի են դիմել «Այլընտրանքային ծառայության» անցնելու համար<br>5. քանի զորակոչիկի գործ է ուղարկվել դատախազություն զորակոչից խուսափելու համար: | 07.07.08 | Հայտնել են դիմել ՀՀ զինկոմիսարիատ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10. | 30.06.08 | Վանաձորի զինվորական կոմիսարիատ | Կազմակերպությունը դիմել է՝ 2008 թ-ի գարնանային զորակոչի վերաբերյալ Վանաձորի զինվորական կոմիսարիատից ստանալ տեղեկատվություն թե՝<br>1. քանի հոգի են զորակոչվել պարտադիր զինծառայության<br>2. քանի հոգի են ստացել տարկետում և ինչ հիմքերով<br>3. քանի հոգի են ստացել տարկետում ա/ առաջին անգամ բ/ երկրորդ անգամ և գ/ երրորդ անգամ<br>4. քանի հոգի են դիմել «Այլընտրանքային ծառայության» անցնելու համար<br>5. քանի զորակոչիկի գործ է ուղարկվել դատախազություն զորակոչից խուսափելու համար: | 14.07.08 | Հայտնել են ՀՀ Լոռու մարզի Սպիտակի զինկոմիսարիատի 2008թ. գարնանային զորակոչի տվյալները: |
| 11. | 30.06.08 | Ստեփանավանի զինվորական կոմիսարիատ | Կազմակերպությունը դիմել է՝ 2008 թ-ի գարնանային զորակոչի վերաբերյալ Ստեփանավանի զինվորական կոմիսարիատից ստանալ տեղեկատվություն թե՝<br>1. քանի հոգի են զորակոչվել պարտադիր զինծառայության<br>2. քանի հոգի են ստացել տարկետում և ինչ հիմքերով<br>3. քանի հոգի են ստացել տարկետում ա/ առաջին անգամ բ/ երկրորդ անգամ և գ/ երրորդ անգամ<br>4. քանի հոգի են դիմել «Այլընտրանքային ծառայության» անցնելու համար<br>5. քանի զորակոչիկի գործ է ուղարկվել դատախազություն զորակոչից խուսափելու համար: | | Պատասխան չի տրվել |
| 12. | 10.07.08 | ՀՀ զինվորական կոմիսարիատ | Կազմակերպությունը դիմել է 2008 թ-ի գարնանային զորակոչի վերաբերյալ, ըստ Լոռու մարզի Թումանյանի, Ստեփանավանի, Տաշիրի, Սպիտակի ու Վանաձորի տարածաշրջանների, ստանալ տեղեկատվություն, թե.<br>1. քանի հոգի են զորակոչվել պարտադիր զինծառայության<br>2. քանի հոգի են ստացել տարկետում և ինչ հիմքերով<br>3. քանի հոգի են ստացել տարկետում ա/ առաջին անգամ բ/ երկրորդ անգամ և գ/ երրորդ անգամ<br>4. քանի հոգի են դիմել «Այլընտրանքային ծառայության» անցնելու համար<br>5. քանի զորակոչիկի գործ է ուղարկվել դատախազություն զորակոչից խուսափելու համար: | 18.07.08 | Հայտնել են՝ դիմել ՀՀ Պաշտպանության Նախարարություն |
| 13. | 16.07.08 | Լոռու մարզի դատախազություն | Կազմակերպությունը դիմել է տրամադրել տեղեկություն այն մասին թե.<br>1. քանի հոգու նկատմամբ է հարուցվել քրեական գործ<br>2. նրանցից քանիսն է հանդիսանում «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության անդամ<br>3. քանիսն է բացակայում հանրապետությունից | 01.08.08 | Հայտնվել է, որ զինկոմիսարիատների կողմից տեղեկատվության տրամադրումը դեռևս ընթացքի մեջ է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 14. | 23.07.08 | ՀՀ Պաշտպանության նախարարություն | Կազմակերպությունը դիմել է 2008 թ-ի գարնանային զորակոչի վերաբերյալ, ըստ Լոռու մարզի Թումանյանի, Ստեփանավանի, Տաշիրի, Սպիտակի ու Վանաձորի տարածաշրջանների, ստանալ տեղեկատվություն, թե.<br>1. քանի հոգի է ենթակա եղել պարտադիր զինծառայության<br>2. քանի հոգու է տրվել ծանուցում զորակոչի մասին<br>3. քանի հոգի են ստացել տարկետում և ի՞նչ տևողությամբ<br>4. քանի հոգի են ստացել տարկետում ա/ առողջական վիճակի պատճառով բ/ ընտանեկան դրության բերումով գ/ ուսումը շարունակելու համար<br>5. քանի հոգի են դիմել «Այլընտրանքային ծառայության» անցնելու համար<br>6. քանի՞ զորակոչիկի գործ է ուղարկվել դատախազություն զորակոչից խուսափելու համար | 19.08.08 | Հայտնվել է, որ չեն կարող պատասխանել, քանի որ հարցերի պատասխանները ծառայողական գաղտնիք են պարունակում և 6 հարցից պատասխան է տրվել միայն մեկ հարցի: |
| 15. | 25.08.08 | ՀՀ Պաշտպանության նախարարություն | Կազմակերպությունը դիմել է 2008 թ-ի հուլիսի 23-ին ուղարկված հարցման պատասխանները ստանալու հարցով: Խնդրելով, որ եթե դրանք համարվում են ծառայողական գաղտնիք, ապա տրամադրել իրավական այն նորմատիվ ակտերի ցանկը կամ դրանց պատճենները, որոնց համաձայն այդ տեղեկությունները համարվում են ծառայողական գաղտնիք: | | Դեռևս պատասխան չի տրվել: |
| 16. | 20.09.08 | ՀՀ Պաշտպանության նախարարություն | Կազմակերպությունը, կարևորելով պաշտպանության գերատեսչության հետ հասարակակական մասնակցության հնարավորությունը, դիմել է՝ ակնկալելով Պաշտպանության նախարարության մասնագետների կողմից մեկնաբանություններն ու առաջարկությունները կազմակերպության կողմից ուղարկված ծրագրի միջանկյալ զեկույցի վերաբերյալ: | 16.10.08 | Հայտնում են, որ կազմակերպության կողմից 2008թ-ի գարնանային զորակոչի մոնիթորինգի արդյունքները ուսումնասիրվել և քննարկվել է ՀՀ զինվորական կոմիսարիարիատում: |
| 17. | 22.09.08 | ՀՀ Անվտանգության Խորհուրդ | Կազմակերպությունը կարևորելով անվտանգության խորհրդի դերը պաշտպանության բնագավառի հարցերում՝ուղարկել է 2008 թ. գարնանային զորակոչի մոնիթորինգի արդյունքները որպես ի գիտություն: | | |
| 18. | 18.10.08 | ՀՀ Պաշտպանության, Ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողով | Կազմակերպությունը ուղարկել է 2008 թ. գարնանային զորակոչի մոնիթորինգի արդյունքները՝ որպես տեղեկատվություն: | | |
| 19. | 18.10.08 | Լոռու մարզի դատախազություն | Կազմակերպությունը դիմել է՝ խնդրելով տրամադրել տեղեկություն այն մասին, թե 2008 թ-ի գարնանային զորակոչից հետո.<br>1. քանի հոգու նկատմամբ է հարուցվել քրեական գործ<br>2. նրանցից քանիսն են հանդիսանում «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության անդամ<br>3. քանիսն են բացակայում հանրապետությունից: | 23.10.08 | Հայտնել են 2008 թ-ի գարնանային զորակոչից խուսափող անձանց մասին թվական տվյալներ: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 20. | 23.10.08 | ՀՀ Պաշտպանության Նախարարություն | Կազմակերպությունը, չստանալով 20.09.2008թ-ին ուղարկված գրության պատասխանը, վերստին դիմել է՝ ակնկալելով ստանալ Պաշտպանության նախարարության մեկնաբանություններն ու առաջարկությունները Լոռու մարզում գարնանային զորակոչի զեկույցի վերաբերյալ: | 11.11.08 | Հայտնել են, որ ՀՀ Պաշտպանության նախարարի հանձնարարականով տարածքային զինկոմիսարիատները հրահանգավորվել են ցուցադրական վահանակների միջոցով և տեղական լրատվամիջոցներով զորակոչի նախօրեին և ընթացքում պարզաբանումներ տալ զորակոչիկներին իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ: Ինչպես նաև հանձնարարականի համաձայն փոփոխության է ենթարկվել ՀՀ ՊՆ 378-2006 թ. ռազմաբժշկական կարգի վերաբերյալ հրամանը: |
| 21. | 28.10.08 | ՀՀ պաշտպանության Նախարարություն | Կազմակերպությունը դիմել է՝ խնդրելով տրամադրել առավել կոնկրետ մեկնաբանություններ և առաջարկություններ զեկույցի վերաբերյալ, քանի որ չունենալով կոնկրետ պատասխան՝ հնարավոր չի լինում բարձրացնել զորակոչի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության արդյունավետությունը: Ինչպես նաև կազմակերպությունը խնդրել է տրամադրել տեղեկատվություն զորակոչի վերաբերյալ վիճակագրական տվյալներ ստանալու հարցով: | 19.11.08 | Հայտնել են, որ տեղեկատվության տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է ծառայողական գաղտնիք, նկատի ունենալով, որ զորակոչի մասին վիճակագրական տվյալները փաստացի պարունակելով զորակոչային պահեստազորի օգտագործման, զորքերի քանակի և զորքերն անձնակազմով համալրելու հնարավորություններին վերաբերվող տեղեկատվություն՝ հանդիսանում են պետական գաղտնիք և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջների համաձայն դրանք տրամադրման ենթակա չեն: |
| 22. | 02.11.08 | ՀՀ Պաշտպանության Նախարարություն | Կազմակերպությունը դիմել է՝ խնդրելով տրամադրել զորակոչը կարգավորող այն իրավական ակտերի ցանկը /անվանումներ, ընդունման տարեթիվը, համարները և ընդունող մարմնի անվանումը/, որոնք տարբեր հիմնավորումներով /«ծառայողական օգտագործման համար», «ծառայողական գաղտնիք» և այլն/ ենթակա չեն հրապարակման: | 19.11.08 | Հայտնել են, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջների համաձայն նշված տվյալները տրամադրման համար ենթակա չեն: |
| 23. | 22.11. 08 | ՀՀ զինվորական կոմիսարիատ | Կազմակերպության խորհրդով զորակոչիկ Գևորգ Աբոյանը դիմել է՝ պահանջելով նշանակել լրացուցիչ բժշկական հետազոտություն | 01.12.08 | Պահանջվել է Վանաձորի զինվորական կոմիսարից զորակոչիկ Գ. Աբոյանին ներկայացնել կենտրոնական բժշկական հանձնաժողով և նիստին զեկուցել նախագահին ներկայացված դիմումի մասին: |
| 24. | 16.12.08 | ՀՀ Պաշտպանության Նախարարություն | Կազմակերպությունը դիմել է զորակոչիկ Արմեն Ներսիսյանի խնդրով, որը ունի սուր ողնաշարային ցավեր, որոնք նշված չեն ախտորոշման մեջ, և զորակոչիկը կարիք ունի բուժման: Կազմակերպությունը խնդրել է Ա. Ներսիսյանի համար նշանակել նոր բուժզննություն կամ հետաձգել նրա բանակ զորակոչվելը 6 ամիս ժամանակով՝ բուժման նպատակով: | 24.12.08 | Հայտնվել է, որ 2008թ. դեկտեմբերի 19-ին Ա. Ներսիսյանը կրկնակի փորձաքննվել է կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից և ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար: |
| 25. | 19.12.08 | ՀՀ Պաշտպանության նախարարություն | 2008 թ. դեկտեմբերի 19-ին Ա.Ներսիսյանը ներկայացել է բուժզննության , որի ժամանակ նրան բանավոր հայտնել են, որ նա պիտանի է զինվորական ծառայության, սակայն նրան չեն տրամադրել բուժզննության արդյունքները, հետևաբար կազմակերպությունը դիմել է, որպեսզի զորակոչիկին տրամադրվի գրավոր եզրակացությունը: | | Պատասխան չի տրվել: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 26. | 22.12.08 | ՀՀ Պաշտպանության նախարարություն | 2008 թ-ի դեկտեմբերի 19-ին զորակոչիկի համար նշանակվել էր լրացուցիչ բուժզննություն, որի ընթացքում ըստ զորակոչիկի, իրեն լիարժեք չեն հետազոտել և կրկին նրան ծանուցագիր են տվել դեկտեմբերի 22-ին բանակ զորակոչելու համար: Կազմակերպությունը դիմել է՝ խնդրելով աջակցել Ա.Ներսիսյանի իրավունքների պաշտպանության հարցում, տրամադրել տարկետում՝ բուժման նպատակով: | | Պատասխան չի տրվել |
| 27. | 22.12.08 | ՀՀ զինվորական կոմիսարիատ | 2008 թ-ի դեկտեմբերի 19-ին զորակոչիկի համար նշանակվել էր լրացուցիչ բուժզննություն, որի ընթացքում ըստ զորակոչիկի, իրեն լիարժեք չեն հետազոտել և կրկին նրան ծանուցագիր են տվել դեկտեմբերի 22-ին բանակ զորակոչելու համար: Կազմակերպությունը դիմել է աջակցել Ա. Ներսիսյանի իրավունքների պաշտպանության հարցում, տրամադրել տարկետում՝ բուժման նպատակով: | 27.12.08 | Հայտնել են, որ զորակոչիկ Ա. Ներսիսյանը դեկտեմբերի 19-ին կրկնակի փորձաքննվել է ՀՀ կառավարության կողմից ստեղծված կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից և ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար, և որ որոշումը հանդիսանում է վերջնական: |
| 28. | 08.01.09 | ՀՀ Պաշտպանության Նախարարություն | Կազմակերպությունը բաց նամակով դիմել է՝ խնդրելով աջակցել զորակոչիկ Ա. Ներսիսյանի իրավունքների պաշտպանության հարցում | 19.01.09<br>24.02.09 | Առաջին պատասխան գրության մեջ հայտնել են , որ Ա.Ներսիսյանի առողջական վիճակի լրացուցիչ հետազոտությունը ընթացքի մեջ է:<br>Հաջորդ պատասխան գրության մեջ հայտնել են, որ 2008 թ-ի դեկտեմբերի 19-ին Ա. Ներսիսյանը կրկնակի փորձաքննվել է կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից և ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար: |
| 29. | 17.01.09 | Թումանյանի զինվորական կոմիսարիատ | Կազմակերպությունը դիմել է՝ 2008 թ-ի աշնանային զորակոչի վերաբերյալ Թումանյանի զինվորական կոմիսարիատից ստանալ տեղեկատվություն, թե.<br>1. քանի հոգի է ենթակա եղել պարտադիր զինծառայության<br>2. քանի հոգու է տրվել ծանուցում զորակոչի մասին<br>3. քանի հոգի է ստացել տարկետում և ինչ տևողությամբ<br>4. քանի հոգի է ստացել տարկետում ա/ առողջական վիճակի պատճառով, բ/ ընտանեկան դրության բերումով գ/ ուսումը շարունակելու համար<br>5. քանի հոգի է դիմել «Այլընտրանքային ծառայության» անցնելու համար<br>6. քանի զորակոչիկի գործ է ուղարկվել դատախազություն զորակոչից խուսափելու համար: | 30.01.09<br>24.02.09 | Առաջին պատասխանում հայտնել են, որ կազմակերպության կողմից ուղարկված գրությունը ուսումնասիրվել է ու զեկուցվել է Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարին, առաջարկել են գրության պահանջները ներկայացնել ՀՀ զինվորական կոմիսարին ամբողջ մարզի վերաբերյալ լիարժեք պատասխան ստանալու համար:<br>Հաջորդ պատասխան գրության մեջ հայտնել են թվական տվյալներ միայն 5-րդ և 6-րդ կետերի վերաբերյալ: |
| 30. | 17.01.09 | Ստեփանավանի զինվորական կոմիսարիատ | Կազմակերպությունը դիմել է՝ 2008 թ-ի աշնանային զորակոչի վերաբերյալ Ստեփանավանի զինվորական կոմիսարիատից ստանալ տեղեկատվություն, թե.<br>1. քանի՞ հոգի է ենթակա եղել պարտադիր զինծառայության<br>2. քանի՞հոգու է տրվել ծանուցում զորակոչի մասին<br>3. քանի՞ հոգի է ստացել տարկետում և ի՞նչ տևողությամբ | 30.01.09 | Հայտնել են, որ կազմակերպության կողմից ուղարկված գրուբունը ուսումնասիրվել է և զեկուցվել է ՀՀ զինվորական կոմիսարին և առաջարկել են գրության պահանջները ներկայացնել ՀՀ զինվորական կոմիսարին ամբողջ մարզի վերաբերյալ լիարժեք պատասխան ստանալու համար: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 4. քանի՞ հոգի է ստացել տարկետում ա/առողջական վիճակի պատճառով բ/ընտանեկան դրության բերումով գ/ ուսումը շարունակելու համար<br>5. քանի՞ հոգի է դիմել «Այլընտրանքային ծառայության» անցնելու համար<br>6. քանի՞ զորակոչիկի գործ է ուղարկվել դատախազություն զորակոչից խուսափելու համար: | | |
| 31. | 17.01.09 | Սպիտակի զինվորական կոմիսարիատ | Կազմակերպությունը դիմել է՝ 2008 թ-ի աշնանային զորակոչի վերաբերյալ Սպիտակի զինվորական կոմիսարիատից ստանալ տեղեկատվություն, թե.<br>1. քանի՞ հոգի է ենթակա եղել պարտադիր զինծառայության<br>2. քանի՞հոգու է տրվել ծանուցում զորակոչի մասին<br>3. քանի՞ հոգի է ստացել տարկետում և ի՞նչ տևողությամբ<br>4. քանի՞ հոգի է ստացել տարկետում ա/ առողջական վիճակի պատճառով բ/ ընտանեկան դրության բերումով գ/ ուսումը շարունակելու համար<br>5. քանի՞ հոգի է դիմել «Այլընտրանքային ծառայության» անցնելու համար<br>6. քանի՞ զորակոչիկի գործ է ուղարկվել դատախազություն զորակոչից խուսափելու համար: | 02.02.09<br>25.02.09 | Առաջին պատասխան նամակում հայտնել են, որ կազմակերպության կողմից ուղարկված գրությունը ուսումնասիրվել է և բանավոր զեկուցվել ՀՀ զինվորական կոմիսարին:<br>Երկրորդ պատասխան գրության մեջ հայտնել են թվական տվյալներ միայն 5-րդ և 6-րդ կետերի վերաբերյալ: |
| 32. | 17.01.09 | Վանաձորի զինվորական կոմիսարիատ | Կազմակերպությունը դիմել է՝ 2008 թ-ի աշնանային զորակոչի վերաբերյալ Վանաձորի զինվորական կոմիսարիատից ստանալ տանեկատվություն, թե.<br>1. քանի՞ հոգի է ենթակա նել պարտադիր զինծառայության<br>2. քանի՞հոգու է տրվել ծանուցում զորակոչի մասին<br>3. քանի՞ հոգի է ստացել տարկետում և ի՞նչ տևողությամբ<br>4. քանի՞ հոգի է ստացել տարկետում ա/առողջական վիճակի պատճառով բ/ ընտանեկան դրության բերումով գ/ ուսումը շարունակելու համար<br>5. քանի՞ հոգի է դիմել «Այլընտրանքային ծառայության» անցնելու համար<br>6. քանի՞ զորակոչիկի գործ է ուղարկվել դատախազություն զորակոչից խուսափելու համար: | 02.02.09<br>25.02.09 | Առաջին պատասխան նամակում հայտնել են, որ կազմակերպության կողմից գրությունը ուսումնասիրվել է և զեկուցվել է ՀՀ զինկոմիսարին:<br>Երկրորդ պատասխան գրության մեջ հայտնել են թվական տվյալներ միայն 5-րդ և 6-րդ կետերի վերաբերյալ: |
| 33. | 17.01.09 | Տաշիրի զինվորական կոմիսարիատ | Կազմակերպությունը դիմել է՝ 2008 թ-ի աշնանային զորակոչի վերաբերյալ Տաշիրի զինվորական կոմիսարիատից ստանալ տեղեկատվություն, թե.<br>1. քանի՞ հոգի է ենթակա եղել պարտադիր զինծառայության<br>2. քանի՞հոգու է տրվել ծանուցում զորակոչի մասին<br>3. քանի՞ հոգի է ստացել տարկետում և ի՞նչ տևողությամբ<br>4. քանի՞ հոգի է ստացել տարկետում ա/ առողջական վիճակի պատճառով բ/ ընտանեկան | 30.01.09<br>27.02.09 | Հայտնել են, որ կազմակերպության կողմից գրությունը ուսումնասիրվել է և զեկուցվել է ՀՀ զինկոմիսարին:<br>Երկրորդ պատասխան գրության մեջ հայտնել են թվական տվյալներ միայն 5-րդ և 6-րդ կետերի վերաբերյալ: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | դրության բերումով գ/ ուսումը շարունակելու համար<br>5. քանի՞ հոգի է դիմել «Այլընտրանքային ծառայության» անցնելու համար<br>6. քանի՞ զորակոչիկի գործ է ուղարկվել դատախազություն զորակոչից խուսափելու համար: | | |
| 34. | 06.02.09 | ՀՀ զինվորական կոմիսարիատ | Կազմակերպությունը դիմել է 2008 թ-ի աշնանային զորակոչի վերաբերյալ, ըստ Լոռու մարզի Թումանյանի, Ստեփանավանի, Տաշիրի, Սպիտակի ու Վանաձորի տարածաշրջանների, ստանալ տեղեկատվություն, թե.<br>1. քանի՞ հոգի է ենթակա եղել պարտադիր զինծառայության<br>2. քանի՞հոգու է տրվել ծանուցում զորակոչի մասին<br>3. քանի՞ հոգի է ստացել տարկետում և ի՞նչ տևողությամբ<br>4. քանի՞ հոգի է ստացել տարկետում ա/առողջական վիճակի պատճառով բ/ընտանեկան դրության բերումով գ/ ուսումը շարունակելու համար<br>5. քանի՞ հոգի է դիմել «Այլընտրանքային ծառայության» անցնելու համար<br>6. քանի՞ զորակոչիկի գործ է ուղարկվել դատախազություն զորակոչից խուսափելու համար: | 17.02.09 | Հայտնել են, որ 2008 թ. գարնանային զորակոչի արդյունքների մասին նմանատիպ տվյալներ հաղորդելու համար ՀՀ Պաշտպանության նախարարը թույլատրել է տրամադրել տեղեկություններ միայն 5-դ և 6-րդ կետերի վերաբերյալ և պահանջվել է Լոռու մարզի տարածքային զինկոմիսարիատներից տեղեկություններ տրամադրել կազմակերպությանը վերը նշված կետերի վերաբերյալ: |
| 35. | 11.02.09 | Լոռու մարզի դատախազություն | Կազմակերպությունը դիմել է 2008 թ-ի գարնանային և աշնանային զորակոչի վերաբերյալ, ըստ Լոռու մարզի Թումանյանի, Ստեփանավանի, Տաշիրի, Սպիտակի ու Վանաձորի տարածաշրջանների, ստանալ տեղեկատվություն, թե.<br>1. քանի հոգու նկատմամբ է հարուցվել քրեական գործ աշնանային զորակոչից խուսափելու համար<br>2. նրանցից քանիսն է խուսափել զինվորական ծառայությունից կրոնական դավանանքի և հա մոզմունքների պատճառով<br>3. քանի հոգու նկատմամբ է հայտարարվել հետախուզում | 23.03.2009 | Հայտնել են 2008 թ. Լոռու մարզում աշնանային զորակոչից խուսափող անձանց մասին թվական տվյալներ: |
| 36 | 09.03. 09 | ՀՀ Պաշտպանության նախարարություն | Կարևորելով պաշտպանական գերատեսչության հետ հասարակական կազմակերպությունների համագործակցությունը որպես զինված ուժերի բարեփոխումներում քաղաքացիական հասարակության մասնակցության ձև՝ կազմակերպությունը դիմել է՝ ակնկալելով պաշտպանության գերատեսչության մասնագետների կողմից մեկնաբանություններ առաջարկություններ 2008 թ. աշնանային զորակոչի մոնիթորինգի զեկույցի վերաբերյալ: | | Պատասխան չի տրվել |
| 37. | 09.03.09 | ՀՀ Անվտանգության խորհուրդ | Կարևորելով անվտանգության խորհրդի դերը պաշտպանության բնագավառի հարցերում՝ կազմակերպության կողմից ուղարկվել է Լոռու մարզում 2008 թ. աշնանային զորակոչի մոնիթորիգի արդյունքները որպես ի գիտություն: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 38. | 09.03.09 | ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին | Կազմակերպության կողմից ուղարկվել է Լոռու մարզում 2008 թ. աշնանային զորակոչի մոնիթորինգի արդյունքները որպես տեղեկատվություն: | | |
| 39 | 09.03.09 | ՀՀ Պաշտպանության Նախարարության, Ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողով | Կազմակերպության կողմից ուղարկվել է Լոռու մարզում 2008 թ. աշնանային զորակոչի մոնիթորինգի արդյունքները որպես տեղեկատվություն: | | |

**ՀԱՎԵԼՎԱԾ 7**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

ВОЕННЫЙ КОМИССАР РЕСПУБЛИКИ АРМЕНИ
THE MILITARY COMMISSAR OF REPUBLIC OF ARMENIA

№ 2/3753
«16» 10 2008թ.

ք. Երևան, Բաբայան 6
г. Ереван, Бабаяна 6
c. Yerevan, Babayan 6

կատ. մուտք 7956

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
պարոն Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի տ. 59 ա

Ի պատասխան Ձեր 20.10.2008թ. ԵՊ 366 գրության՝ «Քաղաքացիական վերահսկողության ձևավորումը Լոռու մարզում զորակոչի գործընթացի նկատմամբ» ծրագրի շրջանակներում, Ձեր կազմակերպության կողմից 2008թ. գարնանային զորակոչի մոնիթորինգի արդյունքները ուսումնասիրվել և քննարկվել է ՀՀ զինվորական կոմիսարիատում:

Ուսումնասիրության ժամանակ պարզվել է որ փաստերը հիմնականում չեն համապատասխանում իրականությանը, իսկ որոշ փաստեր՝ որոնք համապատասխանում են իրականությանը, վերցված է ի գիտություն՝ առաջիկայում և հետագա զորակոչերի ժամանակ բացառելու նպատակով:

գեներալ-մայոր Կ. ՔՈՉՈՒՆՑ

կատ. փոխ/գ-տ Ա. Գալստյան
տպ. ենթ. Ն. Պողոսյան
13.10.2008թ.

**ՀԱՎԵԼՎԱԾ 8**

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան 0088, Գ. Չաուշի փ. 60
Հեռ. 28-72-03
Ֆաքս. 28-50-02

« 11 » 11 2008թ.
ՊՆ/510/վն-718

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
**Ա.ՍԱՔՈՒՆՑԻՆ**

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատասխան Ձեր 23.10.08թ. N ԵՊ 394՝ Լոռու մարզում զորակոչի հետ կապված սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերաբերյալ գրությանը հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարի հանձնարարականով «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի դրույթները հրապարակային դարձնելու նպատակով տարածքային զինվորական կոմիսարիատները հրահանգավորվել են զինկոմիսարիատների շենքերի տեսանելի հատվածում ցուցադրական վահանակներ փակցնելու, ինչպես նաև՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի համաձայն զորակոչիկների իրավունքների և պարտականությունների մասին տեղական լրատվամիջոցներով զորակոչի նախօրեին և ընթացքում պարզաբանումներ տալու վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարի հանձնարարականի համաձայն փոփոխության է ենթարկվել ՀՀ ՊՆ 378-2006թ. ռազմաբժշկական փորձաքննության կարգի վերաբերյալ հրամանը, որը հնարավորություն կտա ավելի հստակեցնելու պատանիների բուժվերազննման աշխատանքները:

Պետության կողմից երբևիցե նախադեպը չունեցող ֆինանսական միջոցներ են տրամադրվել բուժվերազննման աշխատանքներին, որոնց մեջ է մտնում նաև զորակոչիկներին բժշկական հետազոտության ուղարկելու ճանապարհածախսը, որը գտնվում է ՀՀ պաշտպանության և առողջապահության նախարարությունների ամենօրյա ուշադրության կենտրոնում:

**ՀԱՎԵԼՎԱԾ 8**

Ինչ վերաբերվում է փոխհամագործակցությանը, ապա ՀՀ պաշտպանության նախարարության ստորաբաժանումները լրատվական միջոցների և հասարակական կազմակերպությունների հետ կարող են համագործակցել միայն ՀՀ պաշտպանության նախարարի կողմից սահմանված կարգի համաձայն:

Ձեր կողմից անցկացված սոցիոլոգիական հարցումների ժամանակ պատանիների (զորակոչիկների) անտեղյակությունը և չիմացությունը՝ դա հասարակության զարգացվածության աստիճանի գրավական է և մեր բոլորիս խնդիրն է դաստիարակել բանիմաց, հայրենիքի պաշտպանությանը պատրաստակամ, հայրենասեր և առողջ պատանիներ:

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՎԱԳ ՕԳՆԱԿԱՆ -
ՎԱՐՉԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՂԵԿԱՎԱՐ



Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՎԵԼՎԱԾ 9**

*ԼՈՌՈւ ՄԱՐԶ, ք. ՎԱՆԱՁՈՐ,*

*ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 59*

*Ա.ՍԱՔՈւՆՅԻՆ*

«03» 11 2008 թ.

**Հարգելի Ա.Սաքունց**

ՀՀ պաշտպանության նախարարին հասցեագրված Ձեր հաշվետվությունը՝ Լոռու մարզում 2008թ. գարնանային զորակոչի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ, ուսումնասիրվել և քննարկվել է ՀՀ ՊՆ անձնակազմի հետ տարվող աշխատանքի վարչությունում:

Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը մշտապես նմանատիպ ուսումնասիրություններ կատարում է ՊՆ կենտրոնական հավաքակայանում զորակոչիկների և նրանց ծնողների հետ, որոնց արդյունքները օգտագործվում են ընդհանրացված կերպով: Ձեր նախաձեռնությամբ Լոռու մարզում անցկացված զորակոչի գործընթացի վերաբերյալ մոնիթորինգի վերլուծության մեջ բարձրացված հարցերը վաղուց գտնվում են ՀՀ պաշտպանության նախարարության ուշադրության կենտրոնում և հաշվի են առնված զինված ուժերի բարեփոխումների ծրագրում:

Միաժամանակ տեղեկացնում եմ Ձեզ, որ Ձեր կողմից ներկայացված հարցադրումը՝ «զորակոչի գործընթացի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն ձևավորելու» նպատակով, կարելի է իրականացնել համագործակցելով ՀՀ ՊՆ «Բանակ հասարակական կազմակերպությունների համակարգող» խորհրդի հետ, իսկ Ձեր կողմից հայտնաբերված նեգատիվ երևույթների կամ կոռուպցիայի անմիջական փաստերի վերաբերյալ կարող եք դիմել համապատասխան իրավապահ մարմիններին այդ ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար:

*ՀՀ ՊՆ ԱՀՏԱ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ*

*ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

## ՀԱՎԵԼՎԱԾ 10

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՆՍԱՄԲԼԵԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ

Համաձայն Ձեր 17.01.09թ-ի գրության

Հայտնում եմ Ձեզ, որ Ձեր 17.01.09թ-ի գրությունը ուսումնասիրվել է և բանավոր զեկուցվել ՀՀ զինվորական կոմիսարին:

Ուստի, խնդրում եմ Ձեզ, նշված գրության պահանջները ներկայացնել ՀՀ զինվորական կոմիսարին՝ Սպիտակի զինկոմիսարիատի 2008թ-ի աշնանային զորակոչային աշխատանքների վերաբերյալ լիարժեք պատասխան ստանալու համար:

ՍՊԻՏԱԿԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ
փոխգնդապետ Ս. ՂՈՒԲԱԹՅԱՆ

Հայտնում եմ Ձեզ, որ Ձեր 17.01.2009թ. թ գրությունը մեր կողմից մանրամասն ուսումնասիրվել է և զեկուցվել Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատ,ուստի խնդրում եմ Ձեզ նշված գրության պահանջները ներկայացնել Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարին ամբողջ մարզի վերաբերյալ լիարժեք պատասխան ստանալու համար:

Հարգանքներով՝

ՀՀ ՏԱՇԻՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ
ՄԱՅՈՐ Ա.Շ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայտնում եմ Ձեզ, որ Ձեր գրությունը ուսումնասիրվել է և զեկուցվել է Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարին, ուստի, խնդրում եմ Ձեզ նշված գրության պահանջները ներկայացնել ՀՀ զինվորական կոմիսարին՝ ամբողջ մարզի վերաբերյալ լիարժեք պատասխան ստանալու համար:

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ
մայոր ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հայտնում եմ, որ Ձեր գրությունը ուսումնասիրվել և զեկուցվել է ՀՀ Զինվորական կոմիսարին: Ուստի խնդրում եմ, Ձեր նշված գրության պահանջները ներկայացնել ՀՀ Զինվորական կոմիսարին ամբողջ մարզի վերաբերյալ լիարժեք պատասխան ստանալու համար

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ
փոխգնդապետ Ս.Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

Համաձայն Ձեր 17.01.2009 թ. գրության

Հայտնում եմ , որ Ձեր գրությունը ուսումնասիրվել և զեկուցվել է Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարին:

Ուստի, խնդրում եմ Ձեզ, նշված գրության պահանջները ներկայացնել ՀՀ ԶԿ-ին ամբողջ մարզի վերաբերյալ լիարժեք պատասխան ստանալու համար:

ՎԱՆԱՁՈՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ
գնդապետ Ա. Լ. ԹՈՒՄԱՆՅԱՆ